Թիվ 25 (2677) Հուլիսի 5, 2002

Գրական թերթ

Հայաստանի գրողների միության շաբաթաթերթ / Հրատարակվում է 1932-ից / Գինը՝ 90 դրամ

ՕՊԵՐԱՆ, ՍՐՃԱՐԱՆՆԵՐԸ, ՄԵՆՔ: ՄԵՆՔ...

ԿԱՐԻՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ



Երկու օր առաջ հատուկ գնացի ու մեկ անգամ ևս շրջեցի Օպերայի չորսբոլորը: Մեկ անգամ էլ անցա սրճարանների անվերջանալի թվացող շարանի միջով, տեսա, որ իմ վերջին անգամվա այցից հետո կիսատ-շինությունները շշմեցնող արագությամբ են վեր բարձրանում, իսկ «կանաչ տարածք» կոչվողը նույն շշմեցնող արագությամբ անհետանում է նորակառույցների հաղթարշավի ճնշման տակ, որ... Ու հանկարծ հիշեցի «Առաջին սիրո երգը» ֆիլմը: Հիշո՞ւմ եք, Երևանի համայնապատկերով է սկսվում ֆիլմը. նորակառույց ու կառուցվող շենքերն իրար են հաջորդում էկրանի վրա, ու կադրից դուրս ձայնը ի՞նչ խանդավառությամբ է պատմում մեր նորակառույց, վարդագույն քաղաքի մասին: Հիշեցի ու նայեցի շուրջս. մարդիկ անցնում էին՝ կամ անտարբեր, կամ հպանցիկ մի հայացք գցելով շինհրապարակի վերածված Օպերայի մերձակայքով, իսկ այդ հպանցիկը՝ կամ դժգոհ, կամ զայրացկոտ, կամ զարմացած... Ու նորից հիշեցի մի տարեց երևանցու պատմածը. «Օպերան, հրապարակի շենքերը որ կառուցվում էին, այնքա՛ն մարդ առավոտ ու երեկո գնում, նայում էին՝ այդ օրը ինչքան է կառուցվել, ինչպես է կառուցվել, խոսում էին, քննարկում, և ուրախանում էին, ո՞նց էին ուրախանում...»:

Մի քանի օր առաջ երթուղային տաքսում ականատես դարձա այս տեսարանին: Փողոցները վերակառուցվում են, երթևեկությունը դժվարացել է, մեքենայի մեջ նստածներս, շոգից նեղվելով, բավական ժամանակ սպասում էինք: Կանանցից մեկի նյարդերը տեղի տվեցին, ու նա սկսեց բարձրաձայն լուտանք թափել այդ ամենի «մեղավորների» գլխին: Քիչ անց մեկ այլ կին էլ միացավ նրան, մինչև մյուսը չդիմացավ. «Բայց, տիկին, քանդում են, որ սարքեն, չէ՞»: «Ի՞նչ,- միանգամից հետևեց պատասխանը,- դու կարո՞ղ ես ասել, էս բոլոր ընդածների մեջ որն է ճիշտ ու ո՛րը՝ սխալ»:

«Չկա նախկին էնտուզիազմը,- երևի կասեր Պանիկովսկին, բայց կատակելու տրամադրություն չկա: Ու շատ լավ գիտեմ, որ այսօր գրվող որևէ հոդված ոչինչ փոխել, առավել ևս, շտկել չի կարող: Բայց չգրել չեմ կարող: Որովհետև այսօրվա Օպերան այլևս մեր քաղաքի Օպերան չէ՝ երևանցիների սիրելի վայրը, մայրաքաղաքի այցետոմսերից մեկը կամ «մեխը»՝ մի ճարտարապետի բնորոշմամբ: Եվ թող ոմանք շտապեն «պահպանողական» պիտակը կպցնել այսպես ասողին: Իսկ իմ համոզմամբ, *այսօրվա Օպերան այս ժամանակների ու բարքերի դեմքն է*, ու եթե լռում ես, նշանակում է, դու էլ ես մասնակից այս ժամանակների ամենաթող բարքերի վակխանալիային:

***

Ինչո՞ւ Օպերայի շուրջն այսպիսի աղմուկ բարձրացավ, ի՞նչն է պատճառը, որ վերջին տարիներին այսքա՛ն բան տեսած ու կարծես թե այլևս զարմանքի լիմիտը կորցրած մարդիկ զարմացել են, զայրացել, խոսում են, բողոքում, գրում... Ի՛նչ է, սրանից առաջ, ու նաև հետո, քի՞չ անօրինական շինություններ են կառուցվել, մեկի տան պարսպի համար պակա՞ս կանաչ տարածք է «մատաղ արվել», ամենաանհեթեթ, անգամ մարդկանց կյանքին սպառնացող տեղերում քի՞չ բենզալցման կետեր են բուսել... «Զաղացը կորցրել, չախչախն ենք ման գալիս» ասացվածքի գործող անձինք ենք դարձել կամաակամա, որովհետև Զանգվի ձորի «հալի՞ն հասնենք», Երիտասարդական մետրոյի շուրջը կատարվողի՞ն, թե՞ համատարած սրճարանի վերածված քաղաքամայր Երևանի նոր իմիջի հետ հաշտվենք ու ձեռներս կտրենք:

***

Երևանում տեղ չի մնում մարդու համար, ամեն ինչ ծառայում է փողի՝ շենքերը, տարածքները, մայթերը... Բայց մեր քաղաքում կա մի տեղ, որի կողքով անտարբեր անցնել չի լինում. Պռոշյան փողոցի շտապ օգնության 3-րդ հիվանդանոցի շուրջն ստեղծված անսիրտ, անգամ անմարդկային մթնոլորտի մասին է խոսքը: Քաղաքակիրթ աշխարհում ընդունված բան է. հիվանդանոցները առանձնացած են, համարյա մեկուսացված մնացած աշխարհից: Չեմ կարծում, որ բացատրության հարկ կա: Բայց դա՝ քաղաքակիրթ աշխարհում: Մեզանում այդպիսի «նրբությունները» հարգի չեն: Հիվանդանոցի շենքից ընդամենը մեկ-երկու մետր այն կողմ շքեղ ռեստորաններ են կողք-կողքի շարված, շքեղ մեքենաների գալ-գնալուց դադար չկա, ու խորովածի հոտն է բռնել աշխարհը... Սա՝ է մեր մարդասիրությունը, մեր ազգին հասուկ նրբանկատությունը, թե՝ մարդ Աստծո, հիվա՞նդ ես, մեռնո՞ւմ ես, բա մենք քո կողքին ենք, ապրում ու վայելում ենք, պետք եղավ՝ կենացդ էլ կխմենք... Հետաքրքիր է, այդ «օբյեկտները» նախագծողը իրեն հարց չի՞ տվել, թե՝ «Այս խաշխորովածանոցը ո՞ւր եմ դնում... Ախր, մի օր էլ ես եմ գալու այստեղ»: Կուզենայի տեսնել նաև այդ կառույցի թույլտվությունը տված չինովնիկին ու հարցնել. «Ինչի՞ մասին էիք մտածում, երբ հիվանդանոցին այդքան մոտ ռեստորան կառուցելու թույլտվությունն էիք տալիս»:

Այսօրվա Օպերայի սկիզբներից մեկը վերն ասված հիվանդանոցի ու նրան շրջապատած ռեստորանների «ճարտարապետական ներդաշնակումն» է: Դե՛, եթե կարող ենք մահն ու կյանքը այդպես հայավարի, միայն մեզ հատուկ «սրտացավությամբ» ներդաշնակել, մնացածն ի՞նչ է, որ ուզենանք ու չանենք:

***

Հուլիսի 4-ի դրությամբ, Օպերայի տարածքում գործում, կառուցվում ու կառուցվելու են 15 սրճարան (տվյալներն ստացել եմ քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանից): Եթե ընթերցողն արդեն հարցրել է՝ «իսկ ովքե՞ր են տերերը», ես կպատասխանեմ ինձ տրամադրված այդ նույն տվյալներով: «Ատլաս» ՍՊԸ, «Էլդորադո Արմեն» ՍՊԸ, «Սիրո մեղեդի» ՍՊԸ, «Վերելք» ՍՊԸ, «Ա.Վ.Ս.» ՍՊԸ, «Անառիկ Կաղզվան» ՍՊԸ, «Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՍՊԸ, «Ալֆպել պրոդյուսերական կենտրոն» ՍՊԸ, «Կեչառիս» ՍՊԸ, «Դիոնեա» ՍՊԸ, «Մագնոլիա» ՍՊԸ, «Օնլի Մերիմենթ» ՍՊԸ, «Համանվագ» ՍՊԸ, «Անիվների վրա» ՍՊԸ, «Մերի» ՍՊԸ: Այսքանը: ՍՊԸ-ների հաղթարշավ, որ մոլեգնում է Օպերայում: Բայց, խնդրում եմ, այս անշունչ ՍՊԸ-ների շնչավոր տերերի մասին ինձ հարց չտաք: Որովհետև այդ հարցով չեմ էլ հետաքրքրվել: Որովհետև այնքան միամիտ չեմ, որ եթե անգամ կարդամ փաստաթղթերում գրանցված ինչ-ինչ անուններ, պիտի հավատամ, որ նրանք են իրական տերերը: Ինչքան չլինի, Ռուբեն Հախվերդյանի երգը լա՞վ եմ հիշում. «Ես գիտեմ, թե ովքեր են տերերը...»:

***

Հիմա մի միամիտ հարց տամ (այս հոդվածում «միամիտ» հարցեր դեռ լինելու են). այս մի բուռ տարածքում, մի բուռ ծառ ու խոտի մեջ 15 սրճարանը (բայց ո՞վ կարող է երաշխավորել, որ սա վերջնական թիվ է) շատ չէ՞: Այդ ե՞րբ դարձանք այսքան սրճամոլ, լավ, բա մեր համաքաղաքացիները երեկոները չե՞ն ուզում պարզապես գալ զբոսայգի երեխայի, թոռնիկի, ամուսնու կամ սիրած տղայի հետ, նստել ծառերի տակ ու զրուցել: Պարզապես զրուցել, ոչ թե ամեն կողմից լսվող բազմաձայն երաժշտության գերին դառնալ: Ախր, քաղաքում այգի չմնաց, նստարան չմնաց, նրբանցքները վերացրին, սեղաններ շարեցին ու եթե, մարդ ես, հոգնած ես, կամ պարզապես նստել ես ուզում, այդ սեղանների շուրջ շարված որևէ աթոռի քեզ համար չէ: Որովհետև դու, քեզ համար չէ: Որովհետև դու, քեզանից անկախ, քաղաքացուց վերածվել ես հաճախորդի: Իսկ եթե վճարել չես կարող, այգին քոնը չէ: Իսկ ընդհանրապես, ի՞նչ է քոնը այս քաղաքում, եթե վճարել չես կարող...

***

Սրճարանային ողջ շքահանդեսը կողք-կողքի, բարի դրացիաբար գրավել է Օպերայի ողջ տարածքը՝ բացի Արամ Խաչատրյանի շուրջը մնացած փոքրիկ հողակտորից և Թումանյանի ու Սպենդիարյանի արձանների շուրջ եղած ասֆալտապատ տարածքից: Եքերթն սկսում է Մաշտոցի փողոցից կողմինդրածածկ «Մագնոլիան», որն էստաֆետը հանձնում է «Սիրո մեղեդուն» (Թումանյան փողոց), սա՝ «Համանվագին» և «Անիվների վրա»-ին, նրանց կողքին հարմար տեղավորվել են «Օնլի Մերիմենթն» ու «Մերին» (ատամնաբուժարանի դիմացի աղմկահարույց բետոնակառույցը), հետո՝ «ԱՎՍ»-ն ու «Ալֆաելը» (նրանց հարևանությամբ շուտով դրվելու է Ա. Բաբաջանյանի արձանը), դե, իսկ Տերյանի կողմից ևս բետոնակառույց «Ատլասն» է, կողքին՝ «Էլդորադոն» (Սայաթ Նովա փողոց), հետո՝ «Կեչառիս», «Վերելք», «Դիոնեա»... Երջանակը փակվեց: Տիկնայք և պարոնայք, Օպերան զբաղված է: Մինչև վերջին թիզը: Եթե դեռ տեսնում եք մի քիչ ազատ տարածք, մի փշուր կանաչ, դա ժամանակավոր է: Դուք կասեք, թե հայտնի «Աղջկա» արձանի շո՞ւրջն ազատ տեղ է մնացել: Դա այսօր, իսկ մի քանի օր հետո այն ևս կծածկվի, և, գիտե՞ք, շատ հնարավոր է, սարդոստայնով: Համենայնդեպս, Քաղաքաշինական խորհրդում (ՔԽ) այս նախագիծը ներկայացնող պարոն ճարտարապետը ցույց տվեց մի քանի, իբրև թե թեթև կոնստրուկցիաներ, որոնք սարդոստայնի նման պատելու են այդ տարածքը: Իսկ որ սրճարանատերը մի քանի օր կամ շաբաթ անց դրանք «կամրացնի ապակով, հետո էլ՝ բետոնով», ներկաներից ոչ մեկը չէր կասկածում: Այդ «սարդոստայնը» մերժվեց: Բայց մերժվեց ընդամենը խորհրդակցական ձայն ունեցող ՔԽ-ի կողմից: Մնացածը ժամանակը ցույց կտա: Բայց որ «Աղջկա» արձանը շու-

4

© National Library of Armenia OCR by Portmind

Տեղի ունեցավ Գրողների միության վարչության հերթական նիստը, որտեղ ամփոփվեցին Հայաստանի և Արցախի գրողների միությունների համատեղ նիստի և Գրողների առաջին համահայկական խորհրդաժողովի արդյունքները:

Դրական գնահատելով մուրացանյան օրերի շրջանակում ՀԳՄ պատվիրակության այցը Արցախ և հանդիպումները Արցախի մտավորականության հետ, նախագահությունն առաջարկեց ավանդույթ դարձնել նման հանդիպումները, որոնք ավելի կսերտացնեն գրող-հասարակություն կապը:

Վարչության նիստի մասնակիցները կարևոր ձեռքբերում համարեցին հունիսի 16-23-ը տեղի ունեցած Գրողների առաջին համահայկական խորհրդաժողովը՝ առաջարկելով յուրաքանչյուր երկու տարին մեկ հավաքվել՝ գնահատելու իրենց գրական բերքը և կիսելու հոգսերն ու խնդիրները: Քննարկվեց նաև Սփյուռքի գաղթօջախներում ՀԳՄ ներկայացուցչություններ հիմնելու խնդիրը: ՀԳՄ քարտուղարությունը կկազմի այդ խնդրի կարգավորման առանձին գրաֆիկ:

Վարչության նիստն անդրադարձավ նաև խորհրդաժողովի աշխատանքների արդյունքում ստեղծված հայ գրականության սատարման և տարածման համահայկական հիմնադրամին: Խիստ կարևոր ձեռնարկ համարելով հիմնադրամի ստեղծումը, նախագահությունը հույս հայտնեց, որ այն կդիտի սատարվի և՛ մեր կառավարության, և՛ տարբեր հիմնադրամների, և՛ Սփյուռքի մեր գաղթօջախների դրամահավաքի համալրմամբ: Առաջարկվեց ՀԳՄ գրական ֆոնդի սառեցված 40.000 ԱՄՆ դոլարը փոխանցել հիմնադրամի հաշվին և ծառայեցնել գրողների ստեղծագործական, հրատարակչական և սոցիալական խնդիրներին:

Նախագահությունը հաստատեց նաև Գրողների առաջին համահայկական խորհրդաժողովի ֆինանսական հաշվետվությունը:

Քննարկված հարցերի արդյունքում չափազանց կարևորվեց նաև Արցախի և Նուբարաշենի զորամասերում հայ գրողների հանդիպումները զինվորների հետ: Կարևորելով զինվորների հոգևոր դաստիարակության խնդիրները, առաջարկվեց առանձին ծրագիր մշակել Պաշտպանության նախարարության հետ՝ այդ հանդիպումներն առավել արդյունավետ և գործնական դարձնելու նպատակով:

Վարչության նիստի եզրակացությամբ, չնայած որոշ կազմակերպական թերություններին, և՛ ՀԳՄ-ԱԳՄ համատեղ նիստի, և՛ Գրողների առաջին համահայկական խորհրդաժողովի հագեցած ծրագիրն իրագործվել է և գնահատանքի արժանացել: Այդ են վկայում նաև գրողների, մամուլի և հասարակայնության արձագանքները:

Գրական թերթ

Գլխավոր խմբագիր՝
Կարինե Խոդիկյան

Գրանցման թիվ՝ 1175:
Ծավալ՝ տպ. 3 մամուլ: Պատվեր՝ 3278: Տպաքանակ՝ 500:
Տպագրված է «Նոյ» տպարանում:
Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:
Նյութերն ընդունվում են մեքենագիր, չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Արտատպության դեպքում հղումը «Գրական թերթ»-ի պարտադիր է:
Լուսանկարները՝ Բ. Խաչատրյանի

375019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3
52-05-94, 58-95-80, 58-97-20
gr_tert@freenet.am
© 2002, Grakan Tert,
All rights reserved.

ՀՈՒՍԻԿ ԱՐԱ

ՏԵՐ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՎ ԱՆՏԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ընդամենը տասներկու տարի առաջ, որը պատմության համար ակնթարթ էլ չէ, Երևանում, բնակվելու համար, հավաքնի չափ տարածք վարձելը մեծ գլխացավանք էր. նախ ամիսներով պետք է փնտրեիր այդ տարածքը ձեռք բերելու համար և հետո ամսական զգալի գումար վճարեիր՝ որպես կենվոր:

Իսկ այժմ Երևանն ապրում է իր փակ դռների ժամանակը. ամեն շենքում մեկից ավելի փակ դուռ կա: Բնակիչների հեռացումը երբեմն նշանակում է անդարձ լքում, մատաղ սերնդի լեզվական, ազգային կերպարի խաթարում:

Հարց է, թե հեռացողներից քանիսը ետ կգան կամ որքանով հայ կմնան:

Մեզ համար ավետյաց երկիր է դարձել կարոտախտով թաց օտար ափերը: Դեսպանատներում հրաժարվում ենք, ուրանում ինչ-որ թղթեր լրացնել-ստորագրելով և այդպես, կամ ինչպես ասում են, «սևով» գնում-հանձնվում՝ փախստական ու գաղթական, Գերմանիայի և Բելգիայի կառավարություններին՝ ինքնաժխտման և ինքնուրացման մեր բոլոր հնարներով:

Երկրի քայքայման և ավարտման առաջին պայմանը արտագաղթն է, ոչ թե հեղափոխությունը կամ պատերազմը:

Իսկ պատերազմում զոհված տղաները զենք վերցրին ոչ թե անմահանալու կամ արձան դառնալու համար, այլ՝ մեկ սուրբ գիտակցությամբ, որպեսզի այս հողը բնակեցվի, այսինքն չլքվի:

Պարզ է, հայտնվել ենք այնպիսի քաղաքական և տնտեսական կացության մեջ, որ ակամայից չենք հարգում մեր վերջին պատերազմը հաղթած տղաների հիշատակը, այսինքն՝ ոտնահարում ենք այն գաղափարը, որի համար նրանք զոհվեցին:

Եթե Աստծո տասը պատվիրանները անգիր հիշելու ուժը չունենք, գոնե մեզ համար ստեղծենք հինգը՝ մեր օրը գաղթականի անաղ հացով չավարտելու համար: Որոնցից առաջինը օրվա հրամայականով սա է.

– Մի՛ արտագաղթիր.

այսինքն մի՛ կորցրու այն, ինչը երբեք չի նվիրվում և երկրորդ անգամ ձեռք չի բերվում:

***

Հավատը մեկ օրում միանգամից չի մեռնում. ռետինի պես ձգվում-երկարում է մահվան այդ ձևը, ինչպես փտախտը ոսկորներում, կամ քաղցկեղը թոքերից ներս:

Արտագաղթի մի քանի պատճառ կա, որոնցից ամենառեալը հավատի կորուստն է՝ իշխանությունների, սեփական երկրի և ապագայի նկատմամբ: Այսօր Հայաստանի քաղաքացին չի հավատում անգամ իր երկրում բարձրացող պատին, փռվող ասֆալտին, այդ ամենը բացասաբար է ազդում. ո՞ւմ վիլլան կամ հյուրանոցն է բարձրանում, ո՞ւմ «Ջիփ»-ի փափուկ ընթացքի համար է ճանապարհը կարկատվում: Մեզ ինչ:

Հավատին համընթաց մեռնում է նաև հույսը, իսկ դա մահերից ամենավերջինն է ու ահավորը:

Մենք չենք հավատում մեր կերտած պետականությանը, ձեռք բերած անկախությանը, հաղթած պատերազմին:

Այսօր մարդն իրեն ավելորդ է զգում իր ձեռագործած հասարակարգում՝ ինչպես մի անկյուն նետված անպետք իր, որ ժանգոտում է լքվածությունից և մոռացումից:

50-60 տարի արյուն-քրտինքով այս երկիրը կառուցածները այսօր նույն երկրում անտեսված են, դատապարտված սովի ու մահվան:

Մեր ժամանակը ողջերիս ավելի արագ մոռացության մատնեց, քան մեռյալներն են հասցնում դանդաղ մոռացվել...

Մենք որևէ կապվածություն չենք զգում մեր և մեզ կառավարողների, մեր և մեր երկրի, վերջապես մեր և մեր հողի միջև: Եվ որպես ավելորդություն անվերջ դուրս ենք մղվում ու մեր իրականությունը փնտրում այլոց հայրենիքներում:

Սա մեր և մեր նմանների երկիրը չէ. սա երկիր է մի խումբ մարդկանց, որոնց մասնագիտությունն այս երկիրը ատելն է:

Իսկ մենք այս իրականության խորթն ենք ու ընկեցիկը: Եվ մենք փախստականի ու գաղթականի «անձնագրով» մեզ փնտրում ենք այնտեղ, ուր երբեք չենք եղել և հավանաբար չենք էլ լինելու որպես էթնիկ կազմ:

Մեր երկրում ապրելու հաճույքը մեզանից խլել ենք մենք, ոչ թե թշնամին:

Հայաստանում չկա հեղափոխություն կամ հեղաշրջում: Չկա պատերազմ: Չի պայթել ատոմային ռումբ, չի եղել երկրաշարժ կամ ջրհեղեղ... բայց կա արտագաղթ: Գրիպի համաճարակի պես երկիրը բռնած արտագաղթ: Երկիր, որ թռիչքադաշտի է վերածվել, որտեղից օդանավերը լիքը գնում և դատարկ ետ են գալիս:

Եվ որովհետև զրկվել ենք անգիր հիշելու կարողությունից, փորձենք գրառել մեր սեփական երկրորդ «պատվիրանը», որը կարող է և առաջինը լինել.

– Մի՛ սպանեք հավատը.

քանի որ ի սկզբանե ոչ թե Բանն էր, այլ՝ Հավատը:

***

Ստույգ է, Հանրապետության առաջին դեմքից մինչև ամենափոքր գյուղի գյուղապետը՝ այս երկիրը չեն սիրում: Եվ մենք տառապումլքվում ենք անսերությունից:

Բացակայում է սերը՝ քրիստոնեության ամենավերին պատգամը: Ամենահին քրիստոնյա երկրում ոչնչահարված է, չկա՛ քրիստոնեության հիմնաքարը՝ Սերը:

Եվ մեզ առաջնորդում են հեթանոսներ՝ այլադավաններ:

Եթե սեր լիներ, կլիներ նաև հավատ, մենք մեզ մարդ կզգայինք այս երկրում, և չէր լինի արտագաղթ:

Բնակիչների հեռացումը նշանակում է հողի կորուստ. այլ կերպ հայրենիքը չի կորսվում:

Արտագաղթող երկիրը չի կարող տեր լինել իր հաղթած պատերազմին, և նրա ղեկավարների հետ, որպես կանոն, դրսում հաշվի չեն նստում:

Չկան այն մի խումբ տղաները, որոնք սիրեն այս երկիրը, այս ժողովրդին: Գիտակցեն, որ իրենց պապերի ու հայրերի երկիրը նաև իրենց զավակների ու թոռների երկիրն է. այն պահպանել է պետք:

Հայրենիք ամեն անգամ չի տրվում, բայց ամեն անգամ խլվում է:

Ոչ ոք մեզանից մեր երկիրը չի խլում. մենք ենք այն մատուցում՝ պես-պես համեմունքներով և հանելուկներով:

Իսկական, պինդ գենի տղաների մի մասը զոհվեց չարաբաստիկ ղարաբաղներում, մի մասն էլ արտագաղթեց՝ թքելով: Իսկ մյուսները ատամը սեղմել են շրթունքից ներս և լռում են, ինչպես օտարի երկրում են լռում:

Սակայն մեզանից յուրաքանչյուրի մեջ, եթե ոչ արթուն, գոնե անպայման նիրհում է այդ պինդ գենը:

Ո՞վ է մեզանից այն լավ տղան, որ ուժ կունենա ասելու՝ ես սիրում եմ այս երկիրը: Երբ կգտնվի այդ միակը, հենց այդ պահին էլ կդադարի արտագաղթը:

Եվ մենք տերը կլինենք մեր հաղթած պատերազմի, և մեզ հետ հաշվի կնստեն Եվրոպաներում:

Ուրեմն հիշողության կորուստ ունեցողներիս համար գրառենք ևս մի երրորդ «պատվիրան».

– Սիրենք մեզ և մեր երկիրը.

որովհետև այն միակն է ու վերջինը մեզ համար:

***

Դատապարտված է այն ժողովուրդը, որը գոյատևում է հերոսներից փրկվելու հույսով:

Մեզ հարկավոր չեն հերոսներ. մեզ տեր է պետք: Տիրոջ սրտացավություն: Տիրոջ իրավունք:

Տեր այս հողին, երկրին, ժողովրդին, մեր անտեր իրականությանը:

Տեր պետք է լինենք ամեն մեկս մեր բաժին տարածքում:

Եթե վարվենք այն ծիտիկի պես, որ մեջքին պառկած փորձում է իր փոքրիկ ճանկերով պահել իր բաժին երկինքը, ապա ոչինչ չի փլուզվի մեր գլխին:

Իսկ մենք նստել և սպասում ենք, թե ե՞րբ է գալու այն հերոսը, որ մեր գլխին փլվող երկինքը պահի: Թե ե՞րբ պիտի վերջապես Ագռավաքարը բացվի և Փոքր Մհերը գա, Թուր Կեծակիով պաշտպանի մեզ, և տարօրինակ է՝ ո՞ւմից... հենց մեզանից: Բայց դրա համար նախ պետք է ցորենը մասուրի չափ դառնա: Միևնույն է, եթե անգամ դառնա էլ, մեկը չի կարող փլուզվող երկնակամարը պահել բոլորիս փոխարեն:

Ամեն մեկս պետք է մեր բաժինը պահենք:

Սովորենք ծիտիկից:

Իսկ այդ մեկը կարող է օդային տագնապ հնչեցնել: Եվ այդ մեկը կարող ենք լինել ցանկացածս:

Մենք ուզում ենք՝ մեր գործերն ուրիշներն անեն: Ելք ենք փնտրում մեր պարտավորվածությունը դիմացինի ուսերին բարդել: Մենք նույնպես չենք սիրում մեր երկիրը, այսինքն՝ մեզ, և՝ այդ իսկ պատճառով, մանկուրտի տրամաբանությամբ լքում ենք այս հողը, այն, որ միակն է ու վերջինն է աշխարհում:

Մենք պետք է ստիպենք, որպեսզի մեր պաշտոնյաները հաշվի նստեն մեզ հետ: Մենք ենք մեղավոր, որ նրանք մեզ չեն սիրում: Ապրելու այդ կերպը ինքներս ենք ընտրել:

Մենք պետք է վաստակենք ապրելու մեր իրավունքը, ուրիշը չի մատուցելու:

Տեր պետք է լինի մեզանից ամեն մեկը: Մեզ կորստյան մատնողը հենց այդ զգացողության բացակայությունն է:

Մեռելահոտ է այն մտածողությունը, թե՝ ես չէ, թող Պողոսը լինի տերը: Պողոսը չի կարող, դո՛ւ պետք է լինես. դու ասելով՝ նկատի ունեմ ես:

Այո, մեզ տեր է պետք, ոչ առասպելական հերոսներ, որոնց զոհվելուց հետո մենք մեզ թաղված ենք համարում:

Տեր լինենք յուրաքանչյուրս մեր երկրին, մեր իրավունքին:

© National Library of Armenia

2

Այդ դեպքում մեր ընտրյալը կծառայի մեզ, հակառակում ստրուկ ենք, գաղթական, որն իր հայրենիքում չգտնելով իրեն պաշտպանող հերոսին, նրան որոնում է օտար երկրում:

Մենք պետք է մեզ պաշտպանենք, մեր հերոսը մենք ենք:

Մեկ անգամ ևս գրառենք հիշողության այթմատովական թուլություն ունեցողների համար.

- Տե՛ր լինենք... մեզ.

որովհետև ամեն անգամ աշխարհ գալու հնարավորությունը հանդերում թափված չէ:

...

Միջին տարիքի տղամարդը շան հետ կողք-կողքի աղբն է քչփորում՝ մի կտոր հաց գտնելու հույսով:

Զոհված ազատամարտիկի մայրը, սևեր հագած, մուրում է քաղաքի փողոցներում: Մուրում է պատերազմ հաղթած վիրավոր զինվորը՝ մի բաժակ օղու համար, և հաճախ հայհոյում հող, հավատ ու հայրենիք: Կինը՝ երեխան գրկած, նույնպես մուրում է: Դեռահասները, որ վաղվա մեր տերերն են, մեր ապագան, աղբաման են քչփորում կամ փողոցում հացի փող խնդրում: Իսկ հայ կինը պոռնոշուկայում անգամ հինգ հարյուր դրամով է մինետ անում...

Սա է այսօրվա Հայաստանի պատկերը, առավելապես՝ մայրաքաղաքի:

Այդ մարդիկ չունեն հողի, հայրենիքի, երկրի զգացողություն:

Իրենք են ընտրել ապրելու այդ եղանակը՝ փոխարենը իրենց իրավունքները պաշտպանելու: Նրանք իրենց ոչ թե տեր, այլ թափթփուկ են զգում. հենց դա էլ նրանց ինքնակամ դատապարտվածությունն է:

Փողոցում ցանկացած մարդու հարց տվեք. ոչ ոք իրենը չի համարում այս քաղաքը: Բոլորի մոտ կա մեկ ցանկություն՝ հնարավորության դեպքում արտագաղթել:

Այո, սա ուրիշի երկիրն է, և մենք ցանկանում ենք գնալ մեր երկիրը: Բոլորս հեռացող ենք, իսկ ո՞վ է մնացողը:

Ո՞վ է Տերը:

Հայտնի է մեն-մի հասարակական-տնտեսական ֆորմացիա, երբ մարդն աշխատել և սոված է ապրել, դա ստրկատիրական հասարակարգն է: Մեր իրականությունը կրկնակն է այդ հասարակարգի:

Այսօր իսկապես օդային տագնապ է հնչեցված. հնարավոր է 3-5 տարի հետո ջլատվող Հայաստանը վերջնականապես սպառվի:

Իսկ գոյացող պարապը լցվում է այլանդակությամբ, ոչ թե գեղեցիկով:

Այս կորուստը վերջնական կլինի. նման չի լինելու իր նախորդներին:

Իսկ մենք արհեստավարժ ենք՝ վերջանալուց հետո ասել. վա՛յ, էս ոնց եղա՞վ:

Ուշ ենք արթնանում. լեթարգիական քուն ասածը հենց հայի համար է:

Չեմ չափազանցնում. թռիչքադաշտի վերածված Հայաստանը օր-օրի դատարկվում է՝ մեր ստեղծած նպաստավոր պայմաններում:

Իրականում սա մեր և մեր նմանների երկիրն է, ովքեր կիսամերկ ու կիսաքաղց մշակույթ ու գիտություն են ստեղծում, ովքեր հող են մշակում և դարբին են, առհասարակ մշակ են և արտագաղթելու միտք չունեն:

Մենք ենք տերը:

Եթե տասը այդպիսի տղա էլ մնացած լինենք երկրում, բավական է, որ ամեն ինչ վերագտնենք: Տասը չէ, եթե անգամ մեկ հոգի էլ գտնվի, որ իրեն լիարժեք տեր զգա, ուրեմն դեռ ամեն ինչ կորած չէ:

Տեր լինելու խարանը ոչ մեկի ճակատին չեմ դնում. այդ մեկը ես եմ:

Ես եմ տերը: Եվ տիրոջ սրտացավությամբ ու իրավունքով ասում եմ.

- Չսպանենք հավատը.
- Սիրենք մեզ և մեր երկիրը.
- Տեր լինենք.
- Այդ մեկը, Տերը, ես եմ.
- Եվ արդեն պարզ է, չեմ արտագաղթի:

ՍԱՏԱՐԵՑԻՆ «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ»

Գրողների առաջին համահայկական խորհրդաժողովի օրերին, երբ նշվեց նաև «Գրական թերթի» 70-ամյակը, մեր սփյուռքահայ գրչեղբայրները, իրենց նոր գրական գործերից բացի, թերթին սատարեցին նաև դրամական օգնությամբ:

«Գրական թերթը» շնորհակալություն է հայտնում Սոնա Վանին ($ 500 և ամեն ամիս՝ $ 50), Կարպիս Նազարյանին ($ 250), Կարո Պապանեքյանին ($ 200), Մեսրոպ արք. Աշճյանին ($ 100), Պէպօ Սիմոնյանին ($ 50), Թորոս Թորանյանին ($ 50), Մանուել Քէօսեյանին ($ 50), Սարգիս Կիրակոսյանին ($ 50), Թորգոմ Փոստանջյանին ($ 100), Վարդան եպս. Աշքարեյանին ($100), Հարություն Սաղրյանին ($ 100), Փանոս Ճերանյանին ($ 100), Մելքոն Հարությունյանին ($100), Զավեն Բոյաճյանին ($100), Մարգար Շարապխանյանին ($ 50), Ռուբեն Մնացականյանին ($ 30), Զահրատին ($50), Շուշիկ Տասնապետյանին ($50), Անուշ Նագգաշյանին ($50), Մանուել Գազանճյանին (10.000 դրամ), Պողոս Մնապյանին ($ 50), իրանահայ գրողներին ($ 160),

«Գրական թերթի» հոբելյանական երեկոյի անցկացմանը մեծապես օժանդակած՝

Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի տնօրեն պրն Երվանդ Ղազանչյանին և ողջ աշխատակազմին,

«Կիլիկիա» ՓԲԸ-ի տնօրեն Աշոտ Բաղդասարյանին,

«Բրաբիոն-ֆլորա» սերվիսի տնօրինությանը,

ինչպես նաև դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանին, երգչուհիներ Աննա Մայիլյանին, Շուշան Պետրոսյանին, Հասմիկ Հարությունյանին, Նաիրի Գասպարյանին, ասմունքողներ Ժենյա Ավետիսյանին, Սիլվա Յուզբաշյանին և Գայանե Սամվելյանին:

Արմեն Հովհաննիսյան

ՍԽԱԼՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

...Եվ կա՞, արդյոք, այդպիսի ելակետ, որից բխում է նաև քոիսկ հանդեպ դրսևորվելիք վերաբերմունքի չափը, ձևը, իմաստը, կրկնականությունը: Հարակից առաջին միտքն, անկասկած, հանդուրժողության, ներողամտության, կարեկցանքի ըմբռնումն է, ինչ էլ հենց ստիպում է «ըմբռնումով մոտենալ», փորձել ներել, փորձել հասկանալ, թեկուզև ի վնաս քեզ: Քանզի ինքդ քո գլխի տերն ես, կարող ես հասկանալ, ներել, «մոտենալ», եթե խնդիրը միայն քեզ է առնչվում: Եվ ոչ մի դեպքում, ոչ ամենևին՝ ուրիշներին, հասարակությանը: Հայտնի ասույթ է, որ «սակրավորը մեկ անգամ է սխալվում», ավելացնենք նաև բժշկի, մանկավարժի, դատավորի սխալների ահավորության հայտնի դեպքերը: Այո, սխալվում է երեխան, սայթաքում, շեղվում, և ծնողի պարտականությունն է շտկել, հանդուրժելով ներել, ոտքի կանգնեցնել զավակին, հենց դրա համար են ասում՝ «Հո երեխա չես...»: Չափահաս դառնալուց հետո մարդն ինքն է իր արարքների տերն ու պատասխանատուն:

Սակայն կյանքը կյանք է, և ոչ ոք ապահովագրված չէ սխալներից: Տեղն է հիշել Ի. Բաբելի հերոսներից մեկի՝ օդեսյան ինքնուս իմաստախոսների հավատարիմ հետևորդ Բենյա Կրիկի խոսքերը. «... *բայց սխալական են բոլորը, նույնիսկ Աստված... արդյո՞ք Աստծո կողմից սխալ չէր հրեաներին Ռուսաստանում բնակեցնելը, որ նրանք տանջվեին, ինչպես դժոխքում: Եվ ինչ վատ կլիներ, եթե հրեաներն ապրեին Շվեյցարիայում, ուր նրանց կշրջապատեին առաջնակարգ լճերը, լեռնային օդն ու համատարած ֆրանսիացիներ*»:

Օդեսյան ինքնուս իմաստախոսներից դառնանք մեր տնաբույս իմաստասերներին, որոնք մեկ-երկու տեղեկագրական բրոշյուր և ապատեղեկատվական գիրք կարդալուց հետո, փորձում են ամեն ինչ հարմարեցնել իրենց նոսրաբնակ մտավոր «տարածքներին», ածպարարի հմտությամբ գցել-բռնելով *«ժողովրդավարություն»*, *«մարդու իրավունքներ»*, *«անձի ազատություններ»* և նման այլ հասկացություններ՝ ըստ հարմարին: Մի ամբողջ երկիր տարիներով դատապարտել խավարի, ցրտի, կարիքի և հետո «վեհանձնորեն» անպատիժ թողնել դա: Արդյո՞ք հանդուրժողություն, մեծահոգություն է դա, եթե ոչ հանցակցություն, անողնաշարություն, Աստծո պատժի անողոքության չիմացում (ավելի ճիշտ՝ անտեսում):

ՊՐԱՆՔՅՈՒՆ

Օրինակները բազում են, մեր աչքի առաջ են կատարվել, մի անգամ էլ լարեք հիշողությունը, թե ով ինչպես է պատժվել՝ եկեղեցու սպասավորներից մինչև սերժանտ չեղած-գեներալ դարձածներ, ժողովրդի հոգս ու կարիքից փարսաղներ հեռու, ի հաշիվ բազմաց տառապանքի՝ տոզած-հղփացած աստիճանավորներ: Սխալվելու իրավունք ունեի՞ն...

Բայց ահա, տկար է մարդուս հիշողությունը, բթանալու ընդունակ, ինչ առաջին հերթին ակնբախ է դառնում ՀՀԾ վերակենդանացման ծիգ ու ջանքերից, իրենց «կարևոր» դեմքերի հերթափոխ ասուլիսներից, հարցազրույցներից, թերթերի էջերին և էկրանին, տարբեր «հարթակներին» վերստին հայտնվելուց, և Աստված մի արասցե, երկրի ղեկ ու առագաստին նորից տիրանալու ծովահենական նկրտումներից: Վերոբերյալ հասկացություններն այստեղ անկիրառելի են, մեր բառապաշարը՝ հարուստ, տարողունակ, ավելի շուտ օգտվեք *անպատկառ, լկտի, հանցապարտ, պատժախույս* և բազում այլ բառ-իմաստներից: Դարձյալ մտաբերեք. կուսակցական-պետական սանդղակով սրընթաց վերելքի ռեկորդակիր, մեխանիզատոր-«գենսեկ» ճանապարհին հայտնի և անհայտ բազում մեղքեր գործած տխրահռչակ շաղակրա՛տը հենց արգելեց իրեն «մարդ դարձրած» կոմկուսը, ոչ պակաս վատահամբավ ԳԿՉՊ-ից առիթ թոցնելով: Իսկ այդ ի՞նչ կուսակցություն է, որի առաջին և հաջորդ դեմքերը կամ կողոպտիչներ էին, կամ կարգալույծ տերտերներ, դավանափոխ պատեհապաշտներ, օտարի ձեռքը (մարմնի մյուս մասերն անտեսենք) համբուրելու մեռածներ, փախած հանցագործներ և... կանգ առնենք... Եվ ո՞րն է նրանց «անձի իրավունքը», իրեն հարգող հասարակության մեջ նրանց երեվալու իրավունքն ընդհանրապես, ասացեք խընդրեմ... Սակայն մյուս կողմից, մի զարհուրելի հետաքրքրասիրություն է արթնանում. պետք է, որ ներկայացնեն իրենց թեկնածությունները՝ ԱԺ-ում և Հանրապետության ղեկակալի պաշտոններում, իսկ քանի տոկոս քվե հավաքելուց պարզ կդառնա մեր երկրի (տվյալ դեպքում՝ այս երկրի) հասուն ազգաբնակչության ապականվածության, հանցածին և ազգուրաց լինելու տոկոսն ու չափը: Թեև դա շատ բարձր գին է, և ոչ մի «հայտնագործություն» համարժեք չէ նման փորձարարության:

Ու թեև ոգելիցի գովազդներից մեկը նախանձելի համառությամբ պնդում է, թե *«ժողովուրդը երբեք չի սխալվում»*, այնինչ հենց նույն ժողովուրդը երկու անգամ մեծապես, ծայրեծայր, չարաչար սխալվել է:

Երրորդի դռանն ենք:

Սխալվելու իրավունքի շուրջ լրջորեն խորհելու ճիշտ ժամանակն է:

© National Library of Armenia

ՕՊԵՐԱՆ, ՍՐՃԱՐԱՆՆԵՐԸ, ՄԵՆՔ: ՄԵ՞ՆՔ...

Լտով կկորչի իր տիրույթներն ընդլայնող սրճարանի ֆոնի վրա, այդ մեկն անկասկած է:

Այո, սրճարանավարակն այլևս անկառավարելի է դարձել: Այնքա՛ն անկառավարելի, որ Ա. Բաբաջանյանի հարևանությամբ նորակառույց «Ալֆաելը» մի փշուր կանաչն ի՛նչ է, դա էլ չի թողել, նախագծից *այնքա՛ն է «շեղվել»*, և հիմա ձեր աչքի առաջ բետոնի մեջ ձերբակալված հողն է: Ու քանի որ սույն կառույցի իրական տերն ստվերում է, ինձ մնում է միայն հրապարակայնորեն շնորհավորել նրան՝ այդքա՛ն կանաչատյաց գեղագիտական ճաշակն ու շահադիտական ցանկությունն այդպե՛ս համահունչ ներդաշնակելու համար:

Ի դեպ, Թումանյան փողոցի կողմում գտնվող օբյեկտներից մեկը (վերջնականորեն չեմ ճշգրտել՝ ո՞ր մեկը), շատ հնարավոր է, որ իր տարածքում գտնվող թուջե ճաղավանդակը «սրբագրի»՝ պատկերացնո՞ւմ եք, սեփականատիրոջը (թե՞ վարձակալին) շատ ավելի հարմար է առանձին մուտք ունենալ... դեպի փողոց: Ընդամենը պետք է բացել ճաղավանդակը: Ընդամենը... Հուլիսի 3-ին կայացած Քաղաքաշինական խորհրդի նիստում այդ առաջարկը կարծես թե մերժվեց: Ասում եմ՝ կարծես, որովհետև ամեն տեսած չէ, որ ճիշտ է: Հետո՞ ինչ, որ խորհրդի համարյա բոլոր անդամները դեմ արտահայտվեցին դրան: Նրանք այդ իրա[illegible]քն՝ ունեն: Խորհրդակցական ձայնի իրավունքով: Իսկ [illegible]զանում ձայնի իրական իրավունքը շատ հաճախ այդպիսի նիստերի դահլիճում չի գտնվում: Այդ նույն նիստում մի առաջարկ ևս հնչեց՝ Հանրապետության հրապարակում տեղադրել գովազդային վահանակ: Առաջարկը հնչեց, խորհրդի անդամները գերակշիռ մեծամասնությամբ այս մեկն էլ մերժեցին լուրջ հիմավորումներով: Ու հիմա ես պիտի հավատամ, որ այդ վճիռը վերջնակա՞ն է: Ով ուզում է՝ թող հավատա: Ես կսպասեմ, թե երբ է անձնական օգտագործման դարպասիկ բացվելու Օպերայի ճաղավանդակի վրա, իսկ Հանրապետության հրապարակում, Լենինի արձանի փոխարեն վեր է խոյանալու գովազդային վիթխարի վահանակը: Ու տա՛ Աստված, որ իզուր սպասեմ:

***

Օպերայի շուրջ սրճարանային վարակն սկիզբ է առել (նկատի ունեմ իրավաբանորեն հաստատված փաստաթղթերի առկայությունը) 2000 թվականի օգոստոսի 14-ին: Այդ օրն է նշված «Ատլաս» ՍՊԸ-ի դիմաց: Պարզաբանեմ. «Ատլասը» նախկին հասարակական զուգարանի տարածքում վեր բարձրացած բետոնակառույցն է, որն իր չափերով ու դիրքով հաջողությամբ փակում է Օպերայի շենքը Տերյան փողոցի կողմից: Թե ինչքան է գրվել այս օբյեկտի մասին՝ Աստված միայն գիտե, բայց որ ըստ ինձ տրամադրված փաստաթղթի՝ այս ՍՊԸ-ն է սկիզբ դրել հիմնավոր բետոնային սրճարանաշինությանը, խորհրդանշական է: Օպերայի նկատմամբ արված առաջին «հայտը» իր մասշտաբներով ու նկրտումներով հրաշալի հորիզոններ է բացել մնացածների համար՝ «Մե՞նք քեզանից ինչ պակաս ենք»:

Իհարկե, պակաս չեն: Ու հերթով, մեկը մյուսին, ու նաև ողջ աշխարհին ապացուցելով, որ պակաս չեն, տեր են դառնում քաղաքի ամենա... ամենաշահութաբեր, ամենայուղալի, ամենա... պատառներից մեկին: Ու նրանց ինչո՞ւ պիտի հուզի, որ քաղաքը, բացի պրագմատիկ հաշվարկներից, ապրում է նախ և առաջ հոգևոր տարածքով: Որ քաղաքը, ՔԱՂԱՔԸ՝ ոչ պարզապես լանդշաֆտ, բնակավայր, վարչատարածքային միավոր, այլ՝ հիշողություն, անցյալ, կենսագրություն ունեցող օրգանիզմ, տաբուացված տիրույթների իրավունք ունի: ՔԱՂԱՔԸ իր մեջ խտացումներ պիտի ունենա, և միայն դրանք կարող են ՉԱՓԱՆԻՇՆԵՐ սահմանել, ընդունել ու պահել: Օպերայի շուրջ բարձրացվածը աղմուկ չէ, այլ՝ տագնաս, օրեցօր մարդկային ու մարդասեր դեմքը կորցնող ՔԱՂԱՔԻ համար: Որոշ ժամանակից ի վեր պաշտամունքի վերածված փողը նաև գաղափարախոսություն է դարձել, ժողովրդավարական հովեր ունեցող այս երկրում իրականում ծորտատիրությունն է իշխում: Չունևորը չունի ոչ մի նեցուկ ու հենարան, սահմանադրությամբ սոցիալական հռչակված պետությունը միայն մի բուռ ունևորներին է ծառայում, և երկրի ներկայությունից բիրտ անհետությամբ դուրս է մղվում միջին վիճակագրական քաղաքացին՝ դառնալով «Երթալն է ճիշտ» որոշման պատանդը: Իսկ ունևորը գրավում է նրա տարածքը, հիմնավորապես տեղավորվում այնտեղ հենց պետության հոգածու մասնակցությամբ: Որովհետև մի՞թե այդքան միամիտ կարելի է լինել, չհասկանալու համար, որ Օպերայի սրճարանատերերը ոչ միայն կապիտալ ունեն, այլև՝ «տանիք»: Եվ ինչքան էլ Քաղաքաշինական խորհրդի անդամները, զինված Թամանյանով ու իրենց փորձ-իմացությամբ, փորձեն ապացուցել, որ սխալ է Օպերան վերածել սրճարանի բաց երկնքի տակ, քաղաքապետն ու գլխավոր ճարտարապետը, ու մնացած բոլորը եթե անգամ լսեն նրանց, չե՛ն հասկանալու: Որովհետև...

Եվ սա է մեր դժբախտությունը: Որ եթե անգամ նույն քաղաքապետն ու գլխավոր ճարտարապետը դեմ լինեին այդ սրճարաններին, դրանք կառուցվելու էին: Եթե անգամ հաջողվեր այդ սրճարանատերերին համոզել ու ետ կանգնեցնել նման որոշումներից, երաշխավորված չէ, որ վաղը մեկ այլ ունևոր և իշխանավոր աչքը չի գցելու այդ պատառին: Սա է մեր դժբախտությունը: Ու մեզանից ոչ մեկը չի կարող երաշխավորել, որ վաղը մեկ ուրիշը չի վերցնի Կարապի լիճը, կենտրոնում օբյեկտ չի դնի ու երեկոներն էլ, ոտքերը ջուրը դրած, մի կտոր խորոված չի վայելի իր բաժին Հայաստան երկրում:

Այո, սեփականատերը, հատկապես մերօրյա՛ սեփականատերը, որն իր նախնական կապիտալը կուտակելու խնդրով ջունգլիների օրենքն է դավանում, պիտի փորձի տեր դառնալ յուղալի պատառին: Նա իր խնդիրն է լուծում: Բայց մեր քաղաքում միայն նա՞ է խնդիր լուծողը: Իսկ ո՞ւր մնաց պետությունը (ևս մի միամիտ հարց): Ի՞նչ է, միայն Հայաստանո՞ւմ է անցման շրջան: Այդ ինչո՞ւ Մոսկվայում, Մեծ թատրոնի շուրջը սրճարաններ չկան (Փարիզի Գրանդ Օպերայի կամ Միլանի Լա Սկալայի շուրջ չեմ ծավալվում առանց այդ էլ պարզ է), ի՞նչ է, այնտեղ պակաս ունևոր են կամ իշխանական լծակնե՞րն են պակաս ծանրակշիռ: Իհարկե, ոչ, բայց կա՛մ քաղաքի իշխանություններն ավելի հաստատակամ են ու սկզբունքային, կա՛մ էլ հասարակական կարծիքի արձագանքն է բոլորին հայտնի ու չափավորեցնող: Առաջին վարկածը՝ չգիտեմ, բայց երկրորդի նկատմամբ համոզմունքս մեծ է:

Իսկ մեզանում հասարակական կարծիքի մասին խոսելն ավելորդ շռայլություն է: Լռում ենք: Լռությունը երբեմն ընդմիջելով խոսելով: Ու շարունակում ենք լռել: Ասենք, խոսել-գրելն էլ հիմա երկսայր սուր է: Հենց խոսակցությունը թափ առավ՝ նոր կառուցվող օբյեկտների շինարարությունն ավելի արագացվեց, ոմանք մինչև ուշ գիշեր չեն հանդարտվում: Դե, փաստի առաջ կանգնեցնելու խնդիր է դրված, որը, պետք է խոստովանենք, փայլուն է լուծվում: Ու մի օր կարթնանանք ու կտեսնենք Օպերան սրճարանների խայտաբղետ, բետոնա-ապակյա-սարդոստայնային օղակի մեջ և, ո՛վ գիտե, հանկարծ ու պարզվի, որ այդ տարածքում ընդամենը մի կառույց է խանգարում ստեղծված ներդաշնակությանը՝ Օպերայի շենքը արձաններով հանդերձ և Ա. Սպենդիարյանի գերեզմանը:

***

Քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը իր դեմ ուղղված քննադատության հեղեղին պատասխանում է ավելի քան հստակ. «Ես չեմ խուսափում պատասխանատվությունից: Ես եմ պատասխանատու արվածի համար»: Այստեղ, անշուշտ, խոսքը միայն Օպերայի մասին է: Պատասխանատվությունից չխուսափելը հանք բան չէ, հատկապես մեր օրերում, երբ 1990-ից սկսած՝ որևէ պետական այր իր արածի համար ոչ միայն պատասխանատվություն չի կրել, այլև նման ցանկություն էլ չի արտահայտել: Ն. Սարգսյանը համարյա բացառություն է: Բայց ես չգիտեմ, ստեղծված իրավիճակում դա լա՞վ է, թե՞ վատ: Ինչ խոսք, իր բոլոր ելույթներում նա շեշտում է, որ կատարվածը ոչ միայն իր սրտով է, այլև ի՛ր ընտրությունն է: Բայց, ինչպես հայտնի է, անսխալական մարդ չկա (ի դեպ, նա իրեն անսխալական էլ չի համարում): Եվ որպես քաղաքի գլխավոր ճարտարապետ Օպերան վերածում է սրճարանային գոտու, ամեն անգամ չմոռանալով շեշտել, որ սա է միակ ճիշտ ընտրությունը: Բայց այդ դեպքում ինչո՞ւ է հակասում իրեն: Վերն ասված Քաղաքաշինական խորհրդի նիստում նախ անառարկելիորեն պնդելով, որ Օպերայի շուրջն արվածը ճիշտ ելք է, քիչ անց, խոսելով Ա. Բաբաջանյանի արձանի՝ այդ տեղում տեղադրելու մասին, ասաց, որ գուցե ընտրությունը սխալ է, բայց այդ կերպ գոնե տվյալ տարածքը կփրկվի սրճարանի վերածվելուց: Ո՞ր դեպքում է անկեղծ Երևանի գլխավոր ճարտարապետը...

Բոլորիս է հայտնի ճարտարապետների միության հայտարարությունը: Բայց երբ այդ նույն Ն. Սարգսյանը իր վստահության հարցը դրեց, այդ նույն ճարտարապետներից և ոչ մեկը չստորագրեց այդ փաստաթղթի տակ:

Այս օրերին այնքա՛ն մարդկանցից եմ լսել, որ Օպերայի շուրջ կատարվողը անթույլատրելի է: Բայց երբ նրանց առաջարկել եմ միայն չխոսել, պատասխանը նույնն է եղել. «Ի՞նչ է փոխվելու», և թեման փակվել է:

Մտավորականությունը բողոքում է՝ լսվում է աջ ու ահյակից: Բայց քաղաքապետարանում եթե մի քիչ նստես, ապա տարբեր կողմերից հետաքրքի՞ր պատմություններ կլսես մեր հայտնի ու անհայտ շատ մտավորականների մասին, որոնք ի՛նչ միջոցների ասես չեն դիմում իրենց գործին «օրինական ընթացք տալու համար»:

Խորհրդարանում (եթե իրար չեն ծեծում ու հայհոյում) երբեմն խոսում են բարձր թեմաներից, բայց նրանցից ոմանք, լավ իմանալով հանդերձ Օպերայի շուրջ ստեղծված լարված վիճակը, չեն ուզում հրաժարվել իրենց «մանկության վարդագույն երազանքից». չէ՞ որ այնտեղ դեռ մի փոքրիկ տեղ մնացել է:

Փառք Աստծո, Երևանում ոչինչ գաղտնիք չի մնում, և ո՞ւմ համար այսօր գաղտնիք է, որ համարյա այդպիսի պատգամավոր կամ նախարար չկա, որ օբյեկտ, «տաքսու գիծ» կամ նման բան չունենա: Եվ, իհարկե, «տանիք»:

Եվ այստեղ տալու եմ իմ ամենամիամիտ հարցը. «Ինչո՞ւ և ո՞ւմ համար քաղաքի պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցների շարքից հանվեց Օպերան»: Եվ կհնչի հոդվածիս ամենահստակ պատասխանը. «Որպեսզի պատառ-պատառ անեն ու կուլ տան երևանցու հոգևոր սյուներից մեկը՝ նրան թողնելով ծախու օրենքներով ապրող երկրի իրողությանը դեմ-հանդիման»:

Սա է մեր իրականությունը, ապրում ենք երկակի ստանդարտներով, ամբիոնից խոսում պետության արժեքի մասին, իսկ ամբիոնից դեռ չիջած՝ հարկավոր մարդու հետ սեփական գործը «դզում»: Իսկ այն սովորական մարդը, որն ամեն երկրի ու պետության ա՛ղն է, քաշվել է իր պատյանի մեջ, որովհետև զավակը գնաց ու զոհվեց Արցախում, որովհետև պետության տված թոշակն ու աշխատավարձը միայն ծաղրուծանակ է, որովհետև մյուս զավակը չի սովորելու՝ ուսումը վճարովի է, և, ընդհանրապես, *այս կյանքը և քաղաքը՝ առավել, իրենը չեն:*

Եվ ճարտարապետների միությունն ու Նարեկ Սարգսյանը կշարունակեն իրենց պայքարը՝ Օպերայի վերջնական «սրճարանիզացիայի» ֆոնի վրա, քաղաքապետ Ռ. Նազարյանը կշարունակի հրավիրել Քաղաքաշինական խորհրդի նիստեր՝ անդամներին հորդորելով համագործակցել, ինչը հիմնականում նշանակում է քաղաքական համաձայնություն տալ արդե՛ն կատարվածին:

Եվ կշարունակվի այն, ինչ արդեն եղել է:

***

«Իսկ ելք չկա՞»,- կհարցնի միամիտ ընթերցողը: Անկեղծ ասած, չգիտեմ կա՞, թե՞ չկա: Ինքներդ որոշեք: Մեր զրույցի ժամանակ Նարեկ Սարգսյանը հավաստիացրեց, որ նստարաններ են դրվելու Օպերայի (դեռևս ազատ մնացած - Կ. Խ.) տարածքներում, սրճարանատերերի հետ նա հասել է այդպիսի պայմանավորվածության: Խոստացավ, որ սեպտեմբերին կհանվեն կղմինդրե տանիքները: Եվս մի խոստում. մեկ տարվա ընթացքում Օպերայի կանաչ գոտուց պիտի հանել տա արդեն կառուցվող օբյեկտը ու գոնե այդ տարածքում այլևս շինարարություն չի լինելու: Ու նաև ասաց, որ անհրաժեշտ է համարում Օպերայի շուրջ արդեն ստեղծված սրճարանային հոծ գոտին բերել համալիր լուծման:

Այսինքն, մեզ մնում է համակերպվել այս օրերի Օպերային:

***

Ի գիտություն չհամակերպվողների: Պարզվում է, դեռ ամեն ինչ կորած չէ: Իսկ այդ առաջարկությունն արեց Նարեկ Սարգսյանը Քաղաքաշինական խորհրդի նիստում. պետք է ընդամենը, որ այդ նույն Քաղաքաշինական խորհուրդն ստեղծի նախաձեռնող խումբ, որը հասարակական կարծիքը ճշգրտելուց հետո (եթե այդ կարծիքը բացասական է) դիմի ամենավերին ատյան՝ առաջարկելով պետությանը ետ գնել այդ տարածքը այդ նույն հասարակության պահանջը կատարելու համար: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր բան է...

Միջազգային փոխանակությունների և հետազոտությունների խորհուրդը (IREX), 1997 թվականից սկսած, Հայաստանում իրականացնում է «Ինտերնետի մատչելիության և ընդլայնման ծրագիր», որի նպատակն է հնարավորություն ընձեռել հայ մտավորականությանը ներկայանալ համաշխարհային ինտերնետ-ցանցում, ինչպես նաև միջազգային հանրությանը՝ ծանոթանալ հայ մշակույթին և նրա պատմությանը: IREX-ը Հայաստանի տարբեր մարզերում և Երևանում արդեն հիմնել է 10 համակարգչային կենտրոն: 10-րդը բացվեց Հայաստանի գրողների միությունում: Ինչպես տեղեկացրեց «Ինտերնետի մատչելիության և ընդլայնման ծրագրի» տնօրեն Գրիգոր Վահանյանը, ծրագիրն իրականացնելու է մի շարք դասընթացներ՝ սկսած ինտերնետի հիմունքների ուսուցումից մինչև վեբ-կայքերի (սայթ) պատրաստում և ծրագրավորում: ՀԳՄ համակարգչային կենտրոնի բացման հանդիսավոր արարողության ժամանակ, ՀԳՄ Նախագահ Լևոն Անանյանը, շնորհավորելով գրողներին, կարևորեց «մեր գրական ընտանիքի անդամներին 21-րդ դարի հրաշքի՝ ինտերնետի հետ կապելու» խնդիրը՝ առաջնահերթ համարելով հատկապես ինտերնետում «թարգմանական բանկի ստեղծումը, որը մեր գրականությունը մատչելի կդարձնի միջազգային հանրությանը»: «Հայաստանում նույնիսկ նարդի խաղացողների միությունն իր պաշտոնական սայթն ունի ինտերնետում, որն ինքնին գնահատելի է,- շեշտեց թարգմանիչ, ՀԳՄ պաշտոնական սայթի խմբագիր Սամվել Մկրտչյանը,- վերջապես Հայաստանի, թերևս ամենակարևոր ստեղծագործական միությունն էլ, շատ շուտով ունենալու է իր պաշտոնական սայթը, որտեղ կներկայացվի ՀԳՄ կառույցը՝ իր պատմությամբ, 5-21-րդ դարերի հայ գրականության պատմությունը, գրական մամուլը, օտարալեզու հայ գրողները և, իհարկե, հայ գրողների սեփական էջերը»:

Սայթը լինելու է 6 լեզուներով:

© National Library of Armenia

ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

Արևմտահայ գրական դիմանկարի քննության փորձերը մեզանում նոր չեն այնպես, ինչպես նոր չէ ինքը՝ ժանրը, հայ և համաշխարհային գրականության պատմության մեջ: Հարցին այս կամ այն առիթով անդրադարձել են Հր. Թամրազյանը, Հ. Մարգունին, Հ. Մարգարյանը, Ս. Հարությունյանը, Լ. Մնացականյանը, Զ. Ավետիսյանը, ուրիշները, բայց այնքանով, որքանով որ խնդիրն առնչվել է գրականության այլաբնույթ հարցերին, ասել է՝ մասնակիորեն: Մեզանում դիմանկարի ժանրի պատմության ու տեսության՝ ձևավորման և զարգացման ընթացքի առաջին լուրջ ու ամբողջական քննության փորձը Ալ. Մակարյանի վերջերս լույս տեսած «Արևմտահայ գրական դիմանկարը» մենագրությունն է:

Ժանրի ծննդի առեղծվածը փընտրելով հազարամյակների խորքերում (Պլուտարքոսի «Զուգակշիռները» դիտվում է իբրև սկիզբ)՝ գրականագետը խնդիրը ժամանակավրեպ չի համարում՝ առաջնորդվելով ճշմարիտ այն տեսակետով, թե «Գրական ժանրերի զարգացման ընթացքը հավիտենական է, և ժանրերի հիմնախնդիրն էլ գրականության պատմության և տեսության նույնքան մշտագո հարցերից է»:

Գիրքը բացվում է «Ժանրը զարգացման խորապատկերում» գլխով, որտեղ ոչ միայն հանգամանորեն ներկայացվում են հարցի պատմությունը՝ ձևավորման ու զարգացման ընթացքը, դրա ուսումնասիրվածության աստիճանը, այլև այն հարցերի շրջանակը, որոնք սպառիչ պատասխաններ չեն ստացել ո՛չ հայ և ո՛չ էլ ռուս գրականագիտության մեջ, որովհետև գրական դիմանկարն այն ժանրերից է, որոնք «համադրական բնույթով, ենթաշերտային տարաբնույթ բևեռացումներով ու «ազգակից» ժանրերին անակնկալ մերձենալու միտվածությամբ հեռանում են ավանդականի սահմաններից, ձեռք բերում կողմնակի հատկանիշներ և դժվարացնում բուն տիրույթի չափորոշիչները»:

Բարդ ու դժվարին խնդիր է առաջադրել իրեն գրականագետը: Քննության ենթարկելով և համադրելով դիմանկարի ժանրին առնչվող ռուս և համաշխարհային գեղագիտական մտքի առավել հիմնարար նվաճումները (Կուդրյաշովա, Դիմշից, Բարախով, Գալանով, Սիվոգրիվովա, Զինգեր, Անդրոնիկովա, Ավերինցև, Բախտին, Սենտ-Բյով, Պոլ Բուրժե, Ժյուլ Լըմեթր և ուրիշներ), նաև անտիկ դիմանկարի վարպետների (Թեոֆրաստոս, Կոռնելիուս, Տակիտուս, Ավրելիուս, Սվետոնիոս, Պլուտարքոս և այլք) գործերը՝ գրականագետը հմտորեն ու նրբությամբ երևան է հանում արևմտահայ գրական դիմանկարի ընդհանրությունները դրանց հետ, նաև տարբերությունները և ժանրը դիտարկում հենց այդ տիրույթում: Այս մոտեցմամբ էլ գրական-գեղարվեստական դիմանկարը տարազատվում է գրական-քննադատական և հուշագրային-կենսագրական դիմանկարից և դառնում քննության բուն նյութը: Գրական-գեղարվեստական դիմանկարը՝ իբրև ինքնուրույն ժանր, իրավացիորեն համարվում է արևմտահայ գրականության մենաշնորհը, մինչդեռ արևելահայ գրականությանն առավել բնորոշ է գրական-հուշագրային և քննադատական դիմանկարը:

Ալ. Մակարյանը փաստալից ու տեսական լուրջ քննությամբ ցույց է տալիս, որ «Գրական դիմանկարի ժանրը ինքնահատուկ երևույթ էր և չուներ իր նախօրինակը հայ, ինչու չէ, նաև ռուս և եվրոպական գրականության մեջ»:

Ժանրաձևի քննության սկիզբը ծրգվում է մինչև XIX դարի 50-70-ական թվականները, մինչև «Մեղու», «Ծաղիկ», «Մյունատիի էրժիաս» և այլ առաջադիմական պարբերականներ, ուր սաղմնավորվել սկսեց արևմտահայ գրական դիմանկարը: Անշուշտ, սուր դիտողականություն, մանավանդ նրբին զգացողություն էր անհրաժեշտ՝ «Մեղու» երգիծաթերթում հրապարակված Միշել Մասոնի «Անվանի տղայքի» և արևմտահայ գրական դիմանկարի ձևավորման մեջ անմիջական կապ տեսնելու համար: Հենց այս տեսանկյունից է համոզիչ թվում դիտարկումը, թե «դրանք Սվաժյանի ստեղծագործական տարերքի մեջ նպաստել են գրական դիմանկարի ժանրի հղացմանը, «կենսագրությունից» կարող էր ծնվել երգիծական դիմանկարը»: Նաև այս դեպքում անկասկած է դառնում այն չնկատված իրողությունը, որ Հ. Սվաժյանի դիմանկարային երեք նախափորձերը՝ «Մեծ Քիթ մը», «Պ. Զամուռճին աշխարհքես վերնա նե՝ տեղը ո՞վ դնենք», «Խորեն եպիսկոպոս» հրապարակագրական հոդված-պամֆլետները, արևմտահայ գրական դիմանկարի նախատիպ-նախափորձերն են: Իսկ դրա համար քննադատն իր հիմնավորումն ունի. նրանցում դրսևորվում է գրական դիմանկարի առանձնահատկություններից մեկը՝ «սեղմ ձևի մեջ «բնորդի» բնավորության ու գործունեության ամենաէական հատկանիշների վերհանումն ու խարազանումը»:

Ալ. Մակարյանի աշխատասիրությունը շահեկանորեն տարբերվում է առայսօր հայտնի նմանատիպ աշխատանքներից նաև նրանով, որ ներկայացնելով գրական դիմանկարը, իբրև ժանրագրություն, ներկայացվում է նաև «բնորդը» ինչպես որ կա, իր բնականության մեջ: Ակնհայտ է դառնում նախատիպից կերպարին անցման ընթացքը, որ լավագույն ուղին է նաև գրողի վարպետությունը ցուցահանելու համար: Այս հնարանքը հնարավորություն է տվել հեղինակին բնութագրել նաև երգիծանքի հնարավոր ձևերի կիրառման արվեստը:

Աշխատասիրության Հ. Պարոնյանին նվիրված հատվածում, գրականագետի գրիչը դառնում է զարմանալի աշխույժ ու անկաշկանդ: Նոր ու թարմ է Պարոնյան-Պլուտարքոս առնչությունների քննությունը, իսկ Օգսեն Խոճասարյանի դիմանկարի լրագրային տարբերակներից մինչև գրական դիմանկարի վերածելու քննությունը պարզապես գյուտ է: Ի՞նչն է հատկապես հետաքրքիր, եթե չասեմ յուրահատուկ. դատելով սույն երկասիրության վերնագրից՝ Ալ. Մակարյանն առավելապես պետք է սահմանափակվեր տեսական-քննական դիտարկումներով, սակայն խուսափել է տրորված ճանապարհից: Նա դրան զուգահեռ ծանրացել է նաև գեղագիտական հարցադրումների վրա, մատնանշել կերպարների գեղարվեստական կայացման ընթացքը՝ բացահայտելով դիմանկարի ժանրի ծավալի տարածման, գեղարվեստական պատկերների հղկման, կերպարների հոգեբանական ընդգրկումների ընդարձակման, կենսական մանրամասների խորացման պարոնյանական յուրահատուկ ընկալման դրսևորման կերպերը: «Ազգային ջոջերը» բնութագրող խորհրդային տարիների գրականագիտությունը, հասկանալի պատճառներով, առավելապես ծանրացել է սոցիալական, ավելի ճիշտ՝ դասի ու դասակարգի փոխհարաբերությունների խնդրի վրա՝ Պարոնյանին ներկայացնելով գրեթե հեղափոխականի կերպարով: Ընտրվել է ավելի շատ գաղափարականությունը, քան գեղարվեստականությունը: Նորագույն հետազոտողը շտկում է վիճակը, բացում թաքուն շատ շերտեր: Ամենից առաջ աչքի է ընկնում դիմանկարի բնորդի հասարակական գործունեության առավել օբյեկտիվ և անաչառ գնահատությունը, ապա նոր միայն կերպավորման ընթացքը, որը հնարավորություն է տալիս տեսնել ոչ միայն կերպարը զարգացման ընթացքում, այլև պարոնյանական երգիծանքի ողջ գինանոցը՝ իր բազմազանության մեջ:

Գրքի հետագա շարադրանքում առանց ավելորդ մանրամասների, սակայն հանգամանորեն ներկայացվում է ժանրի զարգացման ընթացքը արևմտահայ մամուլում: Գ. Այվազյանի «Մամուլ» և Հ. Հաճյանի «Միմոս» հանդեսներում, ապա նաև Մ. Գաբամաճյանի «Լույս» շաբաթաթերթի էջերում և «Բյուզանդիոնում» (Գ. Խորասանճյանի «Զմյուռնական դիմաստվերքի» քննությամբ): Բացահայտվում է ոչ միայն ժանրի զարգացման ընթացքը: Գրականագետը, դիտարկումները տանելով «Ազգային ջոջերի» հետ համեմատության ուղիներով, վրստահ ու համոզիչ ցույց է տալիս ներժանրային ուշագրավ տրոհումները, առաջընթացի լույսն ու ստվերը:

Այս հատվածում հետազոտողի համար, թերևս, դժվարինը Եր. Օտյանի «Մեր երեսփոխանների» լուսաբանման խնդիրն է եղել:

Ալ. Մակարյանն ամենից առաջ շեղվում է Պարոնյան-Օտյան զուգահեռում երկու մեծերին իրար հակադրելու և նախապատվությունը որևէ մեկին տալու արդեն ավանդույթի ուժ ստացած մերժելի ճանապարհից: Նա առաջնորդվում է այն ճիշտ մտայնությամբ, թե «Ավելի օգտակար է որոնել այն կամուրջները, որոնք կապում են երկու գրողներին, տեսնել այն մասնահատուկը, որ բնորոշ է նրանց ստեղծագործությանը, տվյալ պարագայում՝ դիմանկարներին»:

Ահա տարբերություններն առանձնացնելու դիրքից էլ քննվում է «Մեր երեսփոխանները», համեմատվում «Ազգային ջոջերի» հետ, բացահայտվում նոր կողմերով: Նորություն է Օտյանի դիմանկարային արվեստի կառուցվածքային յուրահատկության բացահայտումը, որն օգնում է հասկանալ ժանրաձևի ամբողջացումը Պարոնյանից Օտյան անցումով, ինչպես նաև բնորդի ընտրության օտյանական չափանիշները, որ նորից տարբեր է պարոնյանականից, նշվում է Օտյանի նախասիրած հնարքը՝ հուշագրությունն իբրև միջոց դիմանկարը կերտելու, որ խորթ էր Պարոնյանի համար:

Գիրքն ամբողջանում է Գրիգոր Զոհրապի «Ծանոթ դեմքերի» քննությամբ: Ալ. Մակարյանն իրավացիորեն պնդում է, թե զոհրապյան դիմանկարներն ըստ էության «համադրական ստեղծագործություններ են, որոնցում առկա են ոչ միայն հրապարակախոսականն ու քննադատականը, այլև ակնարկայինը, հուշագրականը և կենսագրականը», որոնցից որևէ մեկը գերակա չէ: Իբրև զոհրապյան դիմանկարային արվեստի շարունակություն են դիտվում Հար. Ալփիարի «Օրվան դեմքերը», Սիպիլի «Կիսադեմքերը քողին ետևեն. Վայրկենական» շարքը, Տիգրան Արփիարյանի «Ուրվագիծ-վայրկենականները», Թեոդիկի «Ճանչվոր դեմքերը», Օննիկ Չիֆթե-Սարաֆի «Դեմքերը», և ամբողջանում է արևմտահայ գրական դիմանկարի պատմությունն ինչպես որ կա:

Գայանե Բաբայան

Մենապար
Մենապար
Մենապար
Մենապար
Մենապար
Մենապար
Մենապար
Մենապար

ԿՆՈՋ ՏԱՌԱՊԱՆՔԻՑ ԾՆՎԱԾ ՊՈԵԶԻԱՆ

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Գայանե Բաբայանը պոեզիան չի պատկերացնում իրենից դուրս մի բան: Նրա պոեզիան ինքն է՝ իր ապրումներն ու երազանքը, ապրածն ու չապրածը, նաև՝ թե ինչպես կուզենար, որ ապրած լիներ, բայց չստացվեց: Սակայն բանաստեղծուհու պոեզիան, ինքը լինելով հանդերձ, դուրս է գալիս անձնական դաշտից և այնքան հեռանում, որ ընթերցողն ընդունում է որպես իր սեփականը, որովհետև այն, լինելով ջերմ ու անկեղծ, ոչ թե ընթերցողի կողքից է անցնում, այլ՝ միջով, նաև մտնում է ներսում՝ վարակում, ապրեցնում հերոինակի ապրումներով, հուզում, ուրախություն պարգևում՝ հայտնության ուրախություն:

Գայանե Բաբայանի «Մենապար» ժողովածուում ոչինչ հորինված չէ, կեղծ չէ: Նրա տողերն այնքան բնական են, սովորական ու կյանքային, ինչպես ժայռից բխող վճիտ ջուրը, որի մեջ կարող են առանց ծիգ գործադրելու տեսնել մինչև հատակը, արևից շողշողացող գույնզգույն քարերն ու ավազահատիկները: Այդպես է, որովհետև բանաստեղծուհին ոչինչ չունի թաքցնելու, անկեղծ է մինչև վերջ, չի ստիպում լարվել՝ հասկանալու համար ասելիքը, չի ձգնում «ջուր պղտորել»՝ խելացի երևալու, որովհետև չունի դրա կարիքը: Պարզապես մարդկանց հետ կիսում է Աստծո տված պարգևը: Գայանե Բաբայանի բանաստեղծության տողերն այնպես են ծնվում, ինչպես բացվում են խնձորենու կամ դեղձենու ծաղիկները, և ծառը հոգ չի տանում նրանց գեղեցիկ կամ հոտավետ լինելու մասին, գիտի որ, միևնույն է՝ բացվելու են և լինելու են այնպիսին, ինչպիսին են: Այդպես էլ բանաստեղծուհու, եթե ոչ ողջ բանաստեղծությունը, գոնե տողերը, կամ մեկ տողը ծաղկի պես պայթում են՝ ինքնաբուխ, գրավելով, զարմացնելով, ուրախացնելով, որովհետև անսպասելի գյուտ կա դրանց մեջ. «Ախր ես սպասելուց տգեղանում եմ, սիրելիս...», կամ «Ախր ես լացի աղջիկ եմ, մի՛ կողպտիր ինձ, այ տղա...» կամ՝ «Շուն, ես էլ քեզ պես շուն, մեր աչքերը լրիվ նույնն են...»:

Կենդանի է քեռուն նվիրված բանաստեղծությունը: Մի քանի տողի մեջ մի ամբողջ կյանքի ողբերգություն: Այնքան տեսանելի, կարծես կյանք լինի.

Իմ քեռին շատ աշխույժ մարդ էր,
Եվ ինչ լավ էր հարբում,
Շաշ էին ասում, բայց շաշն իրենք էին,
Տեսնեիք՝ հարբած ոնց էր պարում:
Փակ տունը նա շուտ էր մերժել
Եվ այգում էր քնում
Կնանիք էլ՝ ծով իր համար,
Դեպոյից էր բռնում...

«Խրմածոր» բանաստեղծությունը տեղափոխում է պատանեկություն, մի քանի վրձնահարված, և բանաստեղծուհու հետ ապրում ես նրա ափսոսանքը.

... Կաթլուկից շուրթերս ալ, շուրթերս
համով էին,
Ոնց էի ուզում սիրահարվել...
... Կաթլուկի համը չառած իմ շուրթերից.
Հիմա խոհուն ենք, բաժակդ բեր...

Կորցրած, չապրված սիրո ափսոսանքն է բանաստեղծությունների ժողովածուի կապակցող նյութը, դժվար կյանքից ծնվող տառապանքը, ափսոսանքը, բայցև տարիների տված իմաստնության խաղաղությունը.

Չսիրեցիք դուք ինձ, տղերք,
Խեղճուկրակ պոետ տղերք,
Իմ բույրը ձեզ չէր հասնում,
Ես դրսից անփայլ էի՝
Չսիրեցիք դուք ինձ, տղերք...
... Արդեն ուշ է, արդեն ախպեր ենք՝
Չսիրեցիք դուք ինձ, տղերք...

Տառապանքը, չկայացած սերը, անհեռանկար կյանքը, սակայն, համեմված են նուրբ, հազիվ նկատելի հումորով և գեղեցիկ լավատեսությամբ, ինչը շահեկանորեն բարձրացնում է պոետական խոսքը.

... Այնժամ մենք երկու շներով
Ինչ աղմուկ կգցենք գիշերով:
... Մի տեղ կապած շուն եմ,
Մի տեղ լուռ հաչում եմ.
Թե ստացվի՝ կապս կտրեմ,
Տիրոջս լավ կկծեմ...
... Մի վախեցիր, իմ աղջիկ,
Կայծակը սարին է խփելու...

Եղածով հանդերձ, այնուամենայնիվ, բանաստեղծուհին, երբեմն, չդիմանալով «ժամանակակից և առաջադեմ» երևալու գայթակղությանը, անցնում է գեղարվեստի սահմաններից այն կողմ.

Այնպես լավ է, տղերք, այնպես լավ է,
Այնպես ազատ եմ ու անառակ»:
Այս դեռ ոչինչ. շարունակելով, չափն
անցնում է.
«Կուզեք կուրծքս բացեմ, դուք երկուսով
Ձեր շրթունքներով ամուր, պինդ կառչեցեք
Ու ոլորեք տենդով պտուկներն իմ բոսոր,
Ես վերևից ձեռքով ձեր գլուխը գրկեմ,
Մեղսոտ գրգիռի մեջ անգամ՝ տղերք,
Դուք ինձ Աստված պահեք...:

Թող համոզված լինի բանաստեղծուհին, որ այդքանից հետո ոչ մի տղամարդ նրան Աստվածուհի չի պահելու: Լավ է, երբ ամեն ինչ չափի մեջ է: Հարկ չկա, որ շնորհալի բանաստեղծուհին դիմի գեղարվեստին հակացուցված հնարքների, եթե կարող է ասել.

Օ՜, արի, քանի դեռ կին եմ պահել իմ մեջ՝
Մի քիչ էլ աղջնակ եմ այն օրերից...

կամ՝

Աչքերս, որ քեզ երկար սպասելուց
հոգնում են,
Հոգնելուց էլ սարսափում են,
Որ կարող է գեղեցիկ չերևան:
Բայց այդ ամենը սուտ է,
Քո քայլերը լսելուն պես
Նրանք ինչ ուզեն՝ կերևան...:

«Մենապարը» Գայանեի առաջին գիրքն է, բայց բանաստեղծությունների որակով՝ չես ասի: Անկասկած, նա, թեև ուշացումով, բայց իր տեղն է գրավելու պոեզիայի դաշտում, որովհետև դրա համար արդեն իսկ բավական է այս փոքրիկ գրքույկը:

© National Library of Armenia

Գրական թերթ

Իգնատ Մատեան

Հատված
«Հիշողության կղզիներ» վեպից

ՏԵՍԻԼՔԸ

Հունիսի սկզբին, երբ կեռասն սկսում էր կարմրել, Բագրատը հրաժեշտ էր տալիս շինբրիգադին՝ սեզոնն սկսվեց, ես գնացի, և պահակության իմնում գետափի այգին, որը գործարանի օժանդակ տնտեսություններից մեկն էր: Ահա հուլիսի կեսն է, Դեբեդի հովտի շեկ ու շոգ ամառ, և թունդ լոռեցի Բագրատը, բողոքիկի գով շվաքում թիկնած՝ փորձում է չքնել ու չի կարողանում: Ու հենց այդ պահին էլ քնի և արթնության արանքից լսեց հոգին տանջող հին կասկածի ուժեղ և հաստատուն ձայնը: Այո, Նազանը դավաճանում է իրեն, և այդ մասին գիտե ամբողջ ավանը: Մի քանի անգամ փորձել է մեկնաբանել ականջին հասած խորհրդավոր շշուկները, բայց, չկարողանալով խորանալ դրանց իմաստի մեջ, թողել է հետագային: Բայց քիչ առաջ, երբ գլխավոր ինժեների վարորդը եկավ միրգ տանելու, Բագրատին պարզեց երկու շիշ սառը գարեջուր, ասաց՝ Անդոն է ուղարկել:

– Ինչ Անդո,– լավ չէր հասկացել Բագրատը:

– Բաջանագդ, ուրիշ ո՞վ կմտածի քո մասին: Ասաց՝ հանգիստ քնիր էդ շվաքներում, տան մասին մի՛ մտածիր, տանդ գործերը հալած յուղի պես գնում են...

Իրեն հատուկ լպիրշությամբ ինչ էր ակնարկում ինժեների վարորդը: Էլեկտրիկ Անդոն իրեն ինչ բաջանաղ, ինչո՞ւ պիտի իր համար օրումեջ գարեջուր ուղարկի, տան ինչ գործերի մասին է խոսքը...

Ու սև սոսվերը, որ երբեմն-երբեմն, առիթ-առիթի մթագնում էր նրա հոգին ու լարվատեսության լույսի մեջ դարձյալ անէանում, միանշանակ նվաճեց նրա զգացումների ու բանականության ամբողջ տարածքը:

Իրիկնամուտին Նազանը ընթրիք բերեց Բագրատի համար, շեշտված սրտացավությամբ հարցրեց.

– Էս գիշե՞ր էլ չես կարող մի ժամով տուն գալ, գոնե կլողանաս, տակաշորերդ կփոխես:

– Էս գիշեր որ՝ հաստատ չեմ կարող, ականջիս բաներ են հասել, պիտի մինչև լույս հսկեմ...

Կեսգիշերին Բագրատը լքեց այգին, ճամփին տեսնողներ կլինեին՝ մացառուտ լանջով բարձրացավ ավան ու քիչ հետո երկհարկանի իր տան նտեի ծեր թթենու սարդարթների միջով գիտում էր ներսի անցուդարձը: Հսկում էր ու իրենից անկախ, հոգու խորքերից բարձրացող աղերսալի շշուկով խնդրում բոլոր աստվածներին՝ էնպես արեք՝ սուտ լինի, կյանքս դատարկ ու խարվարով լիքը ճաքճքված կարաս չդառնա, էս գիշեր մինչև լույս թող աչքս ոչինչ չտեսնի՝ խոստանում եմ էսքանով համոզվել ու էլ երբեք չկասկածել...

Բայց աստվածներն անհաղորդ էին Բագրատի հոգու աղերսանքին: Նա պատուհանին հպված թթենու ճյուղից լսեց դռան զգույշ թակոցը: Հետո լուսնյակի լույսով ողողված սենյակում տեսավ կիսամերկ, դռներ մոտեցող Նազանին: Ու տեսավ էլեկտրիկ Անդոյին, որ փաթաթվեց Նազանին ու գրկած տարավ դեպի մահճակալը...

Մի քանի բոպե անց քնած թաղամասը զզրդում էր Բագրատի ոռնոցից.

– Հարևանն ե՛ր, ժողովո՛ւրդ, վե՛ր կացեք, վկա եղեք կնկաս լրբությանը...

Շրջակա բոլոր լույսերը վառվեցին: Փնթփնթոց հարևանները դուրս էին թափվում ու խմբվում Բագրատի շուրջը, որը նորմալ արտահայտվելու ունակություններ կորցրած՝ ցնցվում էր ու խոխոջանում:

Կիսաբաց դռան արանքում, տնային խալաթով փաթաթված, կանգնել էր Նազանը և իրը ոչինչ չէր հասկանում:

– Ինչ է պատահել, այ ժողովուրդ, ինչի՞ եք դուռը ջարդում...

– Ուր է սիրեկանդ, բոզ,– Բագրատը կոպտորեն հրեց Նազանին և անասնաբար թռռանչելով ներս մղվեց: Նրան հետևեցին հարևաններից մի քանիսը: Բայց սենյակը դատարկ էր:– Հիմի երկուսիդ էլ կմորթե՛մ, պոռնիկներ,– մոնչում էր Բագրատը՝ տան իրերն ոչնչացնելով:– Ուր ես մտել, բոզի տղա, դուրս արի:– Նա անկողնով հանգերձ շուռ տվեց մահճակալը, ջարդելով բացեց զգեստապահարանի դռները, նայեց բաղնիքն ու զուգարանը ու շվարած, մի քիչ խեղճացած ետ շրջվեց.

– Ուր է...

– Էս մարդը խելքը թոցրել է, այ ժողովուրդ,– բոլոր լրբերին հատուկ կերպափոխության արվեստով Նազանը ի մի հավաքվեց ու անցավ հուժկու հակագրոհի:– Ինչ երազ ես տեսել, ինչ ճանճ է կծել քեզ, այ պակասավոր, որ կեսգիշերով եկել, էս ժողովրդին քնահարամ ես անում:

– Երազ չէր, ես իմ աչքով տեսա, էն բոզի տղան էստեղ էր, քեզ խստեց ու տարավ դեպի կառավաթը...

Բայց Նազանը, լրբենի ուժգին հիստերիայի մեջ, չէր էլ ուզում լսել նրան.

– Ահա սա է իմ կյանքը, այ հարևաններ, օրումեջ էսպիսի մի բան է սարքում գլխիս, ու ես, նամուսի գերի, ամեն ինչ ներսս եմ անում, որ հարևան-բարեկամները, ազգականը չիմանան, թե ինչ ստոր ու վայրենի բաներ է անում էս մարդը: Բայց էլ՝ վերջ, փառք աստծո, ձեր աչքով տեսաք սրա հերթական օյինը, լույսը բացվեց՝ ուղիղ գծով դատարան եմ գնալու...

– Ես էլ իմ աչքով տեսա,– անորոշությունից խեղճացած փնթփնթաց Բագրատը, բայց նրան ոչ ոք չէր լսում:

– Ամոթ է, Բագրատ, հոգուդ մեղք անելով, ընտանիքիդ պատիվը ոտնատակ լաթ ես շինում,– նախատեց տրակտորիստ Արոն:

– Ախր...

– Ինչ ա՞խր,– սաստեց գործարանի պահակ Հայկազը,– կարող ա՞ սուտ ա ասում, ամոթ է, նամուս ունեցիր, ամուսնացած աղջիկներիդ պատիվը գոնե խնայիր...

– Ծառի վրայից ես, ախր, ինչ որ ասում եմ տեսա...

– Ծառի վրա՞ն որն է, այ մարդ, գիշերվա բո՞ւ ես, ինչ ես,– հլա տեսեք ո՛ւմ հետ ենք էսքան տարի հարևանություն արել: Խե՛ղճ Նազան...

Իսկ Նազանը, ընդգծված դժվարությամբ տիրապետելով իրեն, հարևանների ետևից խնդրեց.

– Ժողովուրդ, ձեր ցավը տանեմ, գիտեք՝ էս մարդը միշտ էսպիսին չի եղել, հիվանդություն է, ինքն ինչ անի, մեղք է, ձեռ-ձեռն չգցեք...

Առավոտյան, իհարկե, ամբողջ Այրումը կատարվածի մասին էր խոսում: Այգու բրիգադավար Հակոբը զեկուցագիր ներկայացրեց կադրերի բաժին, որպեսզի պոստն ինքնագլուխ լքելու համար Բագրատին ազատեն աշխատանքից: Տեղամասային բժիշկն առաջարկեց մարդասիրություն ցուցաբերել և նրան գործարանի միջոցներով ապաքինման ուղարկել հոգեբուժարան: Մանկապարտեզի վարիչն ավելի կոնկրետ առաջարկություն արեց՝ թույլ չտալ, որ Բագրատի պես վտանգավոր հոգեհիվանդն անարգել շրջի ավանում, հատկապես՝ մանկապարտեզի շրջակայքում: Այսպես շարունակ: Եվ Այրումը դաժան էր, որովհետև շատ լավ գիտեր իրողություններ՝ տարիների նախապատմությամբ, Նազան երևույթի հասարակական հնչեղությամբ ու Բագրատի տգետ խեղճությամբ:

– Էշություն արի,– հաջորդ օրն իր բոզոքիկում մենացած խորհում էր Բագրատը:– Որ աչքովս տեսա՝ հաստատ է, բայց ո՞ւր ցեղեց էդ շան որդին, ու ես էապես խայտառակ եղա...

Եվ, ինչպես միշտ՝ ուշացումով, հասկացավ չափազանց պարզունակ առեղծվածը. պատուհանից թթենու վրայով իջել, ծլկել է: Այսպես:

Բայց դրանով բանը չվերջացավ: Նազանը ստորագրություններ հավաքեց գիշերապահին իրազեկ հարևաններից և պատրաստվում էր ըստ ամենայնի դատարան ներկայանալ: Այդ մասին Բագրատ այգեպահին լուր բերեց տրակտորիստ Արոն:

– Ամոթ է՝ հիմա էլ դատարան: Գնա՝ ոտքերն ընկիր, ներողություն խնդրիր, խաթրն առ, գուցե մեղմ մոտենա հարցին...

– Նալլաթ քեզ, շար սատանա: Համ աչքովս լրբությունը տեսնեմ, համ էլ ներողություն խնդրե՞մ: Հասկանո՞ւմ ես, ինչ ես ասում, այ մարդ:

– Ես հասկանում եմ, դո՛ւ չես հասկանում, որ սեփական հիվանդության պատճառով չի կարելի ընտանիք քայքայել: Էնքան գողեր են մտնում այգիդ՝ մեկին աչքդ չի տեսնում, և խավար տան պատուհանից լրբությո՞ւն տեսար: Դո՛ւ գիտես, ինձ համար մեկ է,– ասաց Արոն ու նեղացած հեռացավ:

– Էնքան կասեն՝ ե՛ս էլ կհավատամ, թե աչքիս է երևացել,– մենակ մնալով ինքն իրեն թոնթորեց Բագրատը: Ու հանկարծ սեւեռվեց. կարող ա՞, իրոք, ըտենց բան կա: Չէ՛ մի...

Երեկոյան Բագրատի ետևից եկավ ուստա Համոյի ինքնաշեն մեքենան, ասացին՝ ձերոնք ձեր տանը հավաքված քեզ են սպասում: Եկել էին երկու աղջիկներն իրենց ամուսինների հետ, Նազանի մորաքույրը հարսի հետ, իր եղբայր Բարսեղը կնոջ հետ և բարեկամ-հարազատության «ծանր հրետանին»՝ հորեղբայր Վերանը: Նազանն արցունքից կարմրած աչքերով նստել էր բազմոցին ու դեռ ցնցվում էր լրիվ շավարտած լացից:

– Բարիրիգուն ձեզ,– հնարավորին չափ հանգիստ ու անշփոթ արտաբերեց Բագրատը: Բայց նրան ոչ ոք չպատասխանեց: Հորեղբայր Վերանը Բագրատի գալով ընդհատված իր հարցափորձն էր շարունակում.

– Եվ էդ բաները վաղո՞ւց են նկատվում սրա մոտ:

– Էնքան էլ չէ: Զմռանն էր՝ մի գիշեր ինձ արթնացրեց, ասաց՝ էն ոսկիները որտեղ ես պահել, որ ինչքան փնտրում եմ չեմ գտնում: Ասացի՝ ինչ ոսկի, Բագրատ ջան, բացի իմ նշանի մատանին, մեր տանն ուրիշ ոսկի ե՞րբ է եղել: Ասաց՝ էն, էլի, սև տոպրակով, որ Դեբեդի ջրերից գտել, բերել էի...

Բագրատն ապշած նայում էր Նազանին՝ էս ինչե՞ր է խոսում: Բայց նրան ուշադրություն դարձնող չկար:

– Հետո՞,– շարունակեց հորեղբայրը:

– Դրանից մոտ մի ամիս անց եկավ տուն, թե՝ վաղը գործարանի բակում բյանդիրբազ եմ խաղալու, գու պիտի յալանչիություն անես, ժողովրդից փող հավաքես...

Բոլորը հանդիմանալից կարեկցանքով նայեցին Բագրատին: Նազանը շարունակում էր.

– Ասի՝ ոչ մեկին չասեմ, գուցե անցնի-գնա: Բայց էս գիշեր բոլոր չափերն անցավ:

Բագրատը շշմած նայում էր մեկ սրա, մեկ նրա դեմքին ու ոչինչ չէր հասկանում:

– Ամեն ինչ պարզ է,– հեղինակավոր եզրահանգեց հորեղբայր Վերանը:– Բայց ոչ մի դեպքում ընտանիքը չպիտի քայքայվի: Մենք ամբողջ բարեկամությունով պիտի քեզ խնդրենք, որ մեծահոգի լինես, ուրիշն իր լավը քեզ չի տալու:

– Հա, մամ ջան, գիտեմ, որ շատ դժվար է, բայց պիտի ներես պապային, մեղք է,– մղկտաց փոքր աղջիկը:

– Չգիտեմ,– կոշտացավ Նազանը,– հա՝ մեղք է, բայց ես մեղք չե՞մ, որ էսպես նամուսիս հետ խաղում է:

– Նամուս ունեցողը նամուսի գինը կիմանա, սրա համար ինչ...–հարեց Նազանի շուլավերցի մորաքույրը:

– Համա թե ձեր խոսքը մերժելն էլ ինձ համար դժվար է: Ինչ արած, հոգիս վիրավորանքից խորովելով պիտի փորձեմ թանկ հարազատներիս կամքը կատարել,– ասելիքը շարունակեց Նազանը և կտրուկ դարձավ սենյակի կենտրոնում էշացած-կանգնած Բագրատին.

– Կացինը վերցրու, դուրս արի՝ էն ծառը կտրիր:

– Ինչ ծառ, ինչո՞ւ կտրեմ...

– Թթենին: Չլիներ՝ չէիր բարձրանա ու աչքիդ սատանա չէր երևա:

– Ծառը ոչ մի մեղք չունի, աչքիս երևացածն էլ ոչ թե սատանա էր, այլ՝ էլեկտրիկ Անդոն,– հուժկու ըմբոստացավ Բագրատը:

– Բա ասո՞ւմ եք, այ ժողովուրդ, բա ես սրան ոնց ներեմ,– լացի հերթական պոռթկումն ունեցավ Նազանը:– Վաղն էլի ագռավի պես կթառի ծառին, աչքին հնդիկների սպիտակ կովը կերևա: Դե արի ու, խե՛ղճ Նազան, էշը ցեխից հանիր...

– Լսիր, այ խայտառակի,– բռունցքը սեղանին զարկելով որոտաց հորեղբայր Վերանը,– արա՝ ինչ որ ասում է էս աղջիկը, տունդ բո ձեռով մի՛ բանդի...

Եվ թաղի թարուն շշուկների ու փոթկոցների ներքո Բագրատը կտրում էր թթենին: Կտրում էր, կացնի ամեն զարկի հետ մի բառ արտաբերելով՝

– Ես... բո... տիրոջ... մերը: Ջրլնեիր՝... նա ոնց... կիշներ... կփախչեր...

Իրիկնային աստղացոլքը տերևներին՝ ծառը շառաչելով տապալվեց:

– Վերջ, խաղաղություն այս տանը,– մաղթեց տոհմի ավագը:

© National Library of Armenia

Գրական թերթ

ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԱԲԲԱՆ

Կանխորոշված է ջանքը մեր գրի.
Փրկել խոսք ու բառ ժանգափառ ստից,
երբ գաղտնի քուրմը քրիստոնյա երկրի
Փառաբանվել է ուզում իբրև դից:

Բայց անզոր՝ մերժել Գովքը, որ ստին
Սպասավորել է դիպվածում պատեհ,
Միշտ այն գամերն ենք խփել մեր սրտին,
Որ՝ Խաչին Տիրոջ Մարմինն են պահել:

Հիմա դրանք են մեր դեմ դրել ու
Խոսքով Փորձելու կերպը տառապած,
Ու քե՛զ է դարձյալ ամբոխն ընտրելու,
Բանաստեղծության անխոնջ Բարաբբա:

ՄԵՆԱԿ ԱՐՔԱՆ. Արշակի փորձությունը հողով ու ջրով
(Ի հիշատակ Արշակ թագավորի ու նրա սպարապետ Վասակի)

Առաջինն էլի նախարարները հոգնեցին, Արշա՛կ,
Ծունկդ ծալեցին ու քեզ ասացին՝ գնա՛-հանձընվիր,
Հիմա էլ նրանք մեր դեմ են վառել աղ ու ատրուշան,
Որ մեր Աստվածը մեռնի խաչին ու կրակով ծնվի:

Դեռ երկար պիտի մարմինը ծաղկեր, ու հոգին հոգներ,
Որ իրենց պորտին ապահովեին մի հին ապագա...
...Քավդյաներ եկան՝ տաճիկ ուղտերով, հմա-վիուկներ,
Որ հրաժարվի պատվիրաններից մեր մենակ արքան:

...«Ի՞մն է այդ տեղը, վե՞ր կաց՝ ե՛ս բազմեմ» խոսքը անապեստ
Լռության ոսկուց մի քիչ էլ զոհեց Փաստին հարգալի,
Ու Վավերագիրն արձանագրեց, թե հողն ինչպես է
Մատնում իր համար երեսուն տարի կռված արքային:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ
(Ճերմակածի Մուշեղի դրվագով Շապուհի գավաթը)

Այս վավերագիր կաշվի որակին
Մեղք է երևի չընծայել հավատ.
Արքայի տեղակ՝ գահավորակին
Բազմեցըրել է մի անտիկ գավաթ:

Նրա շուրթը դեռ հիշում է գուցե
Գովքի կաթիլը՝ թույնի սրվակից,
Բայց դրվագներն իր պարզ մի զեկույց են
Խաչի զինվորին՝ տնից Զրվանի:

Գավն այդ իր գինին փրկել է ստից
Ու ժամանակը մոմել կենդանի,
Մինչև արշավի սիրտը ասպետի,
Ու աճյունն իր հոր հայրենիք տանի:

ԲԱՌՀՈԳԵԴԱՐՁՈՂ

Չափազանց խոսքը հոգեավերի
Հըրահրումն է տիեզեր[illegible]կան,
Որ ժառանգել ենք՝ որպես բառերին
Ժանգափառ դարձող մի խուլ բառարան:

Ասացողներիս բառհոգեդարձող
Խղճին է արդեն խեղումը հոգու,
Այնինչ պաթետիկ մեր հոգեհացով
Դեռ ողջակեզի կրակն ենք հոգում:

Ավելորդ բեռ է խելոքին՝ լեզուն,
Ու դեռ փլվում է մի ծեր աշտարակ,
Մեզնից պարզ խոսք է երկիրը ուզում,
Իսկ մենք երդո՛ւմ ենք տալիս շարունակ:

ԱՆԴՐԺԱՄԱՆԱԿՅԱ

Ո՞ւր է տանում մեզ այս հույսը շարունակվող՝
Ողնաշարոցը մեր այլամեծար ցեղի,
Եղիցի մուշ երկինք՝ ո՛չ չարահույզ հանուր,
Ո՞ւր է տանում մեզ այս հույսը բանաստեղծիկ:

Մեր դեմ փորձությունն է նվաստացել անզոր՝
Զորագրված փառքին, նկրտումին ծառա,
Ծարավն Ստեղծումի առասպելի միջով
Կապում է մեր գեներն անդրժամանակյա:

Մեր պատումը դեռ կա՝ անուղղելի անչար՝
Հանձարեղ մեր երթին որպես հոգաբարձու,
Ու երկինք չի հասնում ոչ մի դամբանաձառ,
Քանզի մեր տառապանքը հաճելի է Աստծուն:

Գրական թերթ

ԱՆԱՆԻԱ ՄԱՂԱՔՅԱՆ

...

Անդեմ, տձև, մտքեր անձև,
Դրսում հորդող սառը անձրև:
Բառը գինուց թևեր առել...
Շուրջս դեմքեր՝ անդեմ, անձև:

Սառած սուրճը աչքով արեց,
Ներս մտնողը լուռ բարևեց:
Կողքիս տղան քիչ գինովցած
Մի բաժակ էլ ինձ հետ խմեց:

Հայացքս գորշ պատին հառած,
Զույգ ձեռքերով գավը բռնած,
Ինձնից անկախ ետ նայեցի,
Ձեռքս մնաց օդում կախված:

Անձրևի հե՞տ նա իջավ ցած,
Թե՞ վաղուց էր այնտեղ նստած:
Շուրջը ամբոխ, անմիտ կրքեր,
Իսկ նա՝ ձեռքը այտին հենած:

Վայրկյան չանցած՝ թեժ մտքերով,
Խելագարն էր փախչում մայթով,
Շուրթին միայն խոսքը ծանոթ...
«Մնաս բարով, մնաս բարով»:

...

Վեհ մտքերի ու ճառերի այս շփոթում,
հաղթողների, պարտվողների իրարանցում:
Իսկ նա նստած լուռ խավարում,
քնքշորեն ձեռքս է շոյում...

Տիեզերքի օրենքի դեմ անմիտ կռիվ,
գոյությունը քարշ տվողի անարգ պատիվ:
Նա աթոռին, իսկ ես՝ գորգին,
դեմքս հպած նրա ծնկին...

Իր ցեղակցի փառքի համար զոհված քաջեր,
գերեզմանում խոտով պատած շիրիմ անտեր:
Օրը կանցնի՝ լցված սիրով,
մեր փոքրիկի լաց-ծիծաղով...

Գրական թերթ

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

...

Դու եկար, ու հանգան լույսերը:
չմնաց նշույլ իսկ պատրանքի:
Հպումներ: Թունավոր բույսեր են,
պատեցին մարմինս ու հոգիս:
Սպասում-պատրանքից՝ մոլագար,
տիրելով մարմինս՝ հոշոտում,
անհագուրդ հեշտանքում դիվական
ճչում և արտածում էիր թույն:
Մարմինս թողնելով պատանքում,
վերացա, տանելով լոկ հոգիս,
մոռացված իմ դեմքը բեկբեկուն
գտնելով կույր հեռվում՝ քո կողքին:
Տրվելով ճիգերիս խուլ կանչին,
տեսա քեզ՝ նյութեղեն ու անգո,
առկայծում բերկրության և տենչի,
իսկ հեռվում՝ նժույգներ լուռ վարգող:
Երբ եկավ ակնթարթն այն վերջին՝
երկնային ցնորքով պարուրված,
ինձ թվաց լույսերի մի նախճիր
ցանկացած արթնացում, վերադարձ:
Բայց արդեն շատ ուշ էր, և կրկին
խելահեղ ճիչերդ լսեցի,
հագեցման ձայներդ մոլակիր
անդունդում արձագանք տվեցին:
Հեռացար, վառվեցին լույսերը,
ու մնաց մոխրակույտ պատրանքի,
բյուր անգամ՝ թունավոր բույսերից,
տանջահար մարմինս ու հոգիս:

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

...

Այս խոնավ, բորբոսնած քաղաքում,
ուր նույնիսկ արևն է կարծես թաց,
շողերն են սարսռում կարկամած,
այս խոնավ, բորբոսնած քաղաքում:

Արևից սնկեր են հավաքում
ուրվական-բոցերը որբացած,
այս խոնավ, բորբոսնած քաղաքում,
ուր նույնիսկ արևն է կարծես թաց:

...

Ես լույս եմ մուրում պաղ երեկոյից,
որ գորշ խավարը վերծանեմ անվերջ,
որ թողնեմ հեռվում տաղտուկը
հավերժ...
Ես լույս եմ մուրում պաղ երեկոյից:

Իսկ բյուր հուդաներ հետևում են ինձ
ու դավում՝ ունայն բառերով ստերջ:
Ես լույս եմ մուրում պաղ երեկոյից,
որ գորշ խավարը վերծանեմ անվերջ:

...

Անձրևն աղավաղում է
ցայգալույսի գծած պատկերը
լուսամուտիս ապակուն:
Քո դեմքը հալվում է,
ինչպես խոնավ ու փափուկ
հիշողությունը.
մի ողջ հավերժություն
ես սպասում եմ ՄԵՐ ցայգալույսին:

ԼՈՅՍ

Լոյս է, կերոն ու կրակ՝ ճարճատող, հանգող: Տիեզերական լոյսն է, սիրտս ագուցող: Ընդելուզուած եմ քնքոյշ կրակին, մէծ հոգւոյն պէս եւ անմար անանց: Սրտիս կրակը՝ շիջանուտ բայց կա՛յծ: Մրափն անոր յաւերժ չէր, Աստուած: Փառք յաղագս ամենայնի...

Սիրահարն եմ լոյսիդ, ով կրակ: Ճարճատող հանգող կրակալեզուն մեղմեց երբեմն: Երանի՜ անոր...

Ծիծաղն հասաւ ինծի՜ վերջապէս: Բոցեր, որոնք լիզեցին բիլ շղարշը անարատ հոգւոյս: Այն արձագանգեց իբրեւ ծիծաղ խուլ, հեռակայ տօներ ասդին կը մխան:

Լոյս է, ճրագ: Եւ՝ քիչ մը հեգնանք: Սա տօնի սրտին: Նոր դարու շեմին, քչիկ անմեղութիւն ու քչիկ հեգնանք՝ մարմին հովացնող երիզդ լուսեղէն: Անպարփակ մարմին՝ բայց որ խտացաւ աստուածեան սիրոյն անճառ պարոյրին (մեղմի՜ւ...):

Լոյս, տակաւին լոյս, տարփական տրիտուր: Ու տարափոխիկ լապտեր մոգական...

Աստուածամայր լոյս:

ՍԵՂԱՆ

Աշտանակ է գրասեղանս: Երբեմն խարխուլ ու երբեմն՝ պիրկ: Ստեղծումի տենդիս հայելի նկարէն, խարխափումներուս ձգողական մագնիս: Եւ՝ պաշտամունքիս զոհասեղան:

Սա մակերեսն ողորկ մթագոյն զիս կը ստիպէ, կը փաղաքշէ: Ամլութեան երկարատեւ օրուան՝ ընդհուպ մերժեցի զինք, բայց ինձմով միասին կը վերընձիւղուի դարձեալ: Մառախլապատ հոգիս նորէն կը հաշտուի կեանքի շիտակ իրականին հետ:

Սեղանս եղաւ բագարան հաշտութեան, եղաւ անդորրութիւն, գրութեան կնքում: Խորին ծիւրախտս հոն յայտնաբերեցի, լիք երջանկութիւն հոն բանաձեւեցի:

Ըլլալու մարմաջը զիս զգետնեց. նախընտրեցի մնալ ողջակէզ:

Ով սիրուն սեղան, կենդանակամար խրախճան, տուայտանքի դուն կոկիկ

Գրական թերթ

ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

գործիք, սեպաձեւ տառերս փորփրող լիզող, սիրուն ու սերտ սիրող հայեցողական: Ով խնամակալ...

Կը ժպրհիմ գրել վերստին...:

ՁՕՆ՝ ՀԱՅՐԻԿԻՍ

Հայրիկս ճերմակ ձին նստաւ ու ճամբորդեց հեռո՛ւ:

Գնաց, հեռացաւ, ետ չեկաւ երբեք: Եւ հոգիս գնա՛ց, մեկնեցաւ անդարձ: Շատ սիրեցի զինք, բայց թողեց գնաց:

Հայրիկս ունէր սիրտ մը վեհ, բարի: Որ արիւնեցաւ մարդոց հաշուոյն միշտ: Քաղցրիկ էր, համով՝ թարմ հացի պէս: Սիրտս ալ իրեն սրտին սիրահար: Յաւերժ սիրահար:

Հայրիկս՝ արեւ, ես՝ պայծառ լուսին: Ինք՝ սիրտ, ուղեղ, ես՝ իրմէ ծլած հող: Բերրի իրաւ հող: Ինք՝ արմատ ամուր, ես՝ ճիւղ, ոստ դալար: Ապրեցայ իրմով, զինք շնչելով:

Հայրիկս սուրբ եկեղեցի մըն է, գըմբէթ ու տաճար: Կերոն վառեցի անոր խորանին: Փայլատակեց: Ահագնացաւ: Կարօտը կուրծքիս՝ ես հոն շրջեցայ եւ վերագտայ զինք ամենուր՝ կանաչ ծառին մէջ, սիւքին, ջուրերուն, դեղին արեւին: Հայրիկս հոն է, ուր ես եմ հիմա:

Հայրիկս՝ դրախտ՝ յաւիտենութիւն:

Պէյրութ

© National Library of Armenia

Գրական թերթ

Անդրեյ Բիտով

ԱՔԻԼԼԵՍՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Ես այստեղ կփորձեմ պատմել այն մասին, թե ինչպես նույնիսկ ոչ այնքան հասկանալի մի ընթերցողական նամակ, հուշեց ինձ դժվարին ստեղծագործական կացությունից դուրս գալու եթե գոնե ոչ սխալ, ապա միակ ճանապարհը: Իմ հերթին, շարադրելով այս պատմությունը, ես կնշեմ մի փափուկ խընդիր, որը կարող է պարապ թվալ լոկ նրանց, ովքեր գործ չեն ունեցել դրա հետ: Միաժամանակ ինձ կհաջողվի պատասխանել այդ նամակում առաջադրված մի շարք հարցերի: Այդ ամենը կջանամ անել՝ հենվելով միայն սեփական փորձիս վրա:

Ահա արդեն մի քանի տարի է, ինչ ճակատագիրն ինձ կապել է Լև Նիկոլաեվիչ Օդովցևի, ավելի պարզ՝ Լյովայի հետ ... Հաճախ ինձ թվում է, թե նրա մասին ես շատ ավելին գիտեմ, քան՝ ինքս իմ մասին. դրության տիրոջ սովորական մոլորություն: Ես ինքս նրա համար ամեն առումով պակաս հասկանալի եմ. իմ մտադրությունները կռահելու նրա փորձերը ես սանձահարել եմ, և նրա այդ խոնարհությունը միակ բանն է, որով նա սպառնում է ինձ. եթե նրա անձիցս կախվածությունը վերածվի հնազանդության, կկորչի բազմամյա աշխատանքս:

Այո, ինչ ասել կուզի, բա՜րդ հարաբերություններ են... Բարդ հարաբերություններ են կապում մեզ՝ հերոսին և նրա հեղինակին: Մեր սիրավեպի վերջը չի երևում: Ես այդպես էլ դեռ չեմ կարողանում վճռել, կմեռնի՞ արդյոք նա դժբախտ պատահարից, թե՞ կենդանի կմնա: Եվ ահա Լյովան դեռ ողջ է և սաստիկ հոգնել, հալումաշ է եղել՝ սպասելով հեղինակի ընտրությանը: Անխախանձելի վիճակ:

Ահա արդեն մի քանի տարի... Մինչդեռ ամեն ինչ սկսվել է անեկդոտից: Պրոֆեսոր Ն-ն, որը տասը տարի առաջ իմ ուղեկիցն էր [illegible]ուն վերադառնալիս, պատմեց, թե ինչպես իրենց հիմնարկին հանձնված թանգարանում տոներին հերթապահելու մնացած երկու երիտասարդ աշխատակից լավ կոնծել և տուրուդմփոց էին սարքել՝ ապակի ու ցուցանմուշ ջարդելով: Սակայն հաջորդ օրը, ուշքի գալով, կայծակնորեն կարգի էին բերել ու վերականգնել ամեն ինչ, այն է՝ այնպես, որ աշխատանքի գալով ոչ մեկը ոչինչ չէր նկատել: Մի տեսակ մերկապարանոց, առանց որևէ հիմքի ես այս պատմությունը սյուժե համարեցի և որոշեցի գրել «Աուտ» վերնագրով մի պատմվածք: Ես միտք էի անում. ըմբոստացող դիպլոմավոր բանասերնե՞ր... Չէ, սարսափելի է... Ապա իրենց անճոռնի, զայրացուցիչ ապստամբության հետևանքներն այդպես ստրկամտորեն սրբել-վերացնելը նույնպես գրավում էր ինձ: Թեկուզև վատ, բայցևայնպես արարքս խրախնքի այդ գոլորշիացումը զբաղեցնում էր միտքս:

Սյուժեն բաց չէր թողնում ինձ, և ես որոշեցի ազատվել դրանից: Սակայն պետք է ինչ-որ կերպ արդարացնեի մտադրությունս ապագա ընթերցողի առաջ: Իրոք, ավելի քան տարօրինակ է այդչափ մասնավոր և ոչ բնութագրական դեպք ընտրելը: Այնժամ ես որոշեցի հակիրճ շարադրել հերոսի ինչ-որ մի նախապատմություն, այն նպատակով, որպեսզի նախապես ուրվանշված պատմությունը հատկապես այդ անեկդոտում կարողանար երևան գալ առավել ցայտունորեն, քան դրա դրսևորման պայմանները: Ես տարվեցի յուրատեսակ հնէաբանությամբ՝ ոսկոր առ ոսկոր վերականգնելով հրեշին և՝ հլու մեթոդի բնական հաջորդականությանը, պատմությունն ավարտեցի նրանով, որ խանձարուրի մեջ շուռումուռ եկավ իմ դեռևս անմեղ հերոսը, բացեց աչուկներն ու լաց եղավ՝ իր գլխավերևում տեսնելով հեղինակի չածիլված մռութը: Դրանից հետո ես ձեռնոցի պես շուռ տվի պատմությունը, և այն սկսվեց հենց այն սկզբից, որով, հեղինակային անդրանիկ մոտեցմամբ, ավարտվել էր. այն է՝ անմիջապես ծնունդից: Այլևս ոչ ոք չի կասկածի, թե ձեռնոցը շրջված է, որ այն մյուս ձեռքինն է, որ պատմության ներքին ու արտաքին երեսները փոխել են իրենց տեղերը...

Թող լինի՝ ինչ լինելու է, վճռեց հեղինակը՝ ձեռքից բաց թողնելով ձևի առաջնությունը: «Ու ազատ վեպի անծայր հեռուն...»:

Եվ այսպես, սա արդեն «Աուտ» պատմվածքը չէր, այլ՝ «Տուն» վեպի սկիզբը: Որդու կողքին հայտնվեցին հայրն ու մայրը, թոռանը պապ ծնվեց (ամեն ինչ նույն այդ ձեռնոցային հաջորդականությամբ), ես հասցնում էի նրանց տեղերը փոխել պատմվածքում, որպեսզի հերոսը ժառանգի իր նախնիներին, թեպետ նրանք ծնվել էին հետնորդից (այնուամենայնիվ վեպը ժամանակի հետ կամայականորեն վարվելու զարմանալի միջոց է): Ի հայտ եկան ապօրինի քեռին և հիմնական երթուղու էքսկուրսիոն ընձյուղները. բոլոր այդ մարդիկ, չկասկածելով, գոյություն ունեին հենց նրա համար, որպեսզի իրենց ստեղծած հերոսը չարաբաստիկ խառնաշփոթ սարքի գոյություն չունեցող սենյակում:

Այսպես, կամաց-կամաց, ես պատմությունը հասցրի մինչև հերթապահության ցանկալի պահը. այստեղ է, որ երազանքիս հետքով, գրիչս պիտի վազ տար, մինչդեռ քարացավ՝ կախվելով ներկա ժամանակի կատարից... Ես հայտնաբերեցի, որ ամեն ինչ պատմելով հերոսի անցյալի մասին, ոչ մի բան էլ, պարզվում է, չեմ պատմել անձամբ նրա մասին, այսինքն նրա մասին պատմել եմ կողքից՝ այս օրվա հեռանկարից ու փորձից ելնելով և ոչինչ չեմ պատմել այն մասին, թե ինքն ինչպես էր, անձամբ ինքն ինչ էր զգում իմ գնահատականից առաջ՝ իր անցյալի ցանկացած պահ գտնելով ինչպես ներկայում: Խռովված ու շվար, ես հասկացա, որ այդպես էլ չեմ հասել ընտրածս սյուժեի սկզբին:

Այսպես, իբրև առաջինի մեկնակերպ ու տարբերակ, ծնվեց երկրորդ մասը, գրված արդեն ոչ այնքան հեղինակի, որքան հերոսի տեսանկյունից: Հեղինակը չէ, որ շուռումուռ տալով տնտղում էր հերոսին պատմական անցյալում, այլ՝ հերոսն էր ինքնուրույն ծողփում ներկայի ջրերում: Փոխարենը՝ այստեղ միայն իր համար էին ծաղկում նրա աղքատիկ այգիները, այստեղ էին հասունանում նրա սերը, թշնամանքն ու բարեկամությունը, կյանքը՝ հերբարիումային առաջին մասի պատմական դարակներում դարսված ծաղկաթերթերի փոխարեն:

Մինչ այդ, անցնում էին նաև հեղինակային կյանքի տարիները: Եվ մի տեսակ խամրեց ու հեռացավ այն պատմությունը, որ ես այնքան երկար փայփայել էի, որի սկզբին վերջապես հասել էի: Ինչպիսին էլ որ լիներ իմ հերոսը, ես մասամբ կապվել էի նրա հետ և չէի ուզում փակել նրա հաշիվը:

Կարծես այսպես է. վաղ առավոտ, ջահել կին, մենք տուն ենք շինում: Տաշեղից անտառի բույր ես առնում, հենց անտառն էլ հեռու չէ: Մենք սիրում ենք, դա դեռևս դրժվար չէ... Կինս գլուխը դնում է ուսիս, շշնջում է: Մենք տղա ենք ունենալու: Հերոսը ներս մտավ, մոռացավ դուրս ելնել, ինչ-որ մեկը ներս է խցկվում պատուհանից: Բայց... ախ, ես հոգնում եմ, ամեն ինչ հոգնում է... հոգնում է կացինը, հոգնում է գերանը, հոգնում է կինը, երեխան է հոգնում մոր արգանդում: Արդեն ծուլանում է ծնվելը. հոգնում է ժամանակն ինքը:

Հեղինակի ձեռքերը թուլացան. նա անկարող եղավ իր հերոսի դանդաղորեն ծորող ներկայում որևէ սյուժե որսալ: Եվ ուրիշ ելք չէր մնում, քան սպանել նրան հենց այն պահին, երբ նա վերջապես անմիտ ներս էր սողում, ինչպես կենդանի մեկը: Սակայն ես չեմ սիրում գրական սպանություններ: Դրանց դիմաց սեփական հատուցումն է երևում աչքիս:

Այստեղ ահա, ինչպես երկնքից, ինձ է հասնում ընթերցողի այս նամակը:

«Հարգելի Անդրեյ Գեորգևիչ: Մեծ ու չընդմիջվող հետաքրքրությամբ կարդացի ձեր «Դեղատնային կղզին»: Շատ գոհ եմ, որ կարդացի այն, թե չէ երբեք չէի ընթերցի, եթե չլիներ այս առիթը... (ապա հետևում է միայն հեղինակիս համար հետաքրքրություն ներկայացնող առիթի նկարագրությունը, որը ես բաց եմ թողնում):

Սրանով վերջացնում եմ,- գրում էր իմ թղթակիցը,- կամ ես ձեզ լավ չեմ հասկացել, կամ էլ դուք ուրիշ բան էիք ուզում ասել: Հասկացեք, ես հայրաբար հետաքրքրված եմ ձեր հերոսով. կյանքումս չեմ հանդիպել ինձ այդքան նման մի մարդու: Այդ պատճառով էլ ձեր ստեղծագործությունը համարում եմ ծայր աստիճան ոչ տիպական և պարզ չէ՝ ում համար գրված, քանի որ, այդ առումով ես հաշվի մեջ չեմ և դուք ինձ չեք ճանաչում: Ինձ միայն խիստ հետաքրքրում է՝ եղե՞լ է ձեր հերոսի նման մարդ, թե՞ դուք նրան հորինել եք:

Ես հասկանում եմ, որ հերոսի ազգանունն, իհարկե, այդպես չէ: Ես կարծում եմ, որ այդ ամենը ինքներդ եք ապրել՝ թաքուն չծիկրակելով, սակայն ինչո՞ւ գրել այդ մասին: Իսկ եթե դուք այդ ամենը հորինելով եք ընդհանրացրել, ապա տարօրինակ է, չեմ հավատա: Եթե դուք ինչ-որ մեկին եք նկատի ունեցել, հապա ինչպե՞ս եք դուք նրան այդպես քերթել-տկլորացրել: Մի՞թե չեք խղճում: Ինչի՞ համար եք դուք նրան այդպես տանջում: Եթե ձեր հերոսը կենդանի մարդ է, ես կուզեի գրել նրան, ոչ թե ձեզ:

Մաղթում եմ հետագա ստեղծագործական հաջողություններ նաև կյանքում:

Վալերի Կարետա,
օպերատոր»:

Բառացիորեն հենց այսպես գրված այս նամակը տարօրինակ կերպով ստիպեց ինձ մտահոգվել հերոսի մասին, այսինքն, թե որքանո՞վ է նա իրական, ոչ թե իրականությանը համապատասխանող, այլ հատկապես իրական, ասել է՝ կենդանի, ինչպես մենք (ես ու դուք), ինչպես մարմին...

Բանն այն է, հանկարծ մտածեցի ես, որ ինչ-որ իմաստով ես նամակ եմ ստացել իմ հերոսի անունից: Ինչ հարկ՝ խնդմնդալ միամտության վրա, երբ գրականության մեջ շահագործվում է հենց այդ հատկությունը՝ երբ հերոսների կյանքը վերապրվում է իբրև կենդանի, իրականության մեջ գոյություն ունեցող կյանք:

Մի ժամանակ ես ծիծաղում էի սիրված հերոսների հետագա ճակատագրով հետաքրքրվող պարզամիտների վրա, ծիծաղում էի գրական ստեղծագործության կառուցվածքի օրենքների չիմացության, պայմանականության չափը չհասկացողների և այլնի վրա, քանզի ինչ շարունակություն կարող է լինել ստույգ նշված վերջաբանից հետո:

Այժմ հեղինակիս նույնպես սկսել է հետաքրքրել, թե հետագայում ինչ է լինում հերոսների հետ... Ինչպե՞ս է, օրինակ, կերպարանափոխվում Ռոսկոլնիկովն այն բանից հետո, երբ նրա մեծն տարեգիրը նրանից քամել է նրա ողջ կյանքը և մսխել այն մի կարճ ժամանակահատվածում այնպես, որ դատավճռից բխող նման եզրակացությունից հետո կյանքն այլևս անհնար է: Դատավճիռն ի կատար է ածված. ինչ տաշեղ ու փշրանք է ավլում-լցնում հեղինակն իր սեղանից դեպի վերջաբանը: Այնտեղ անվերահսկելի ներկա ժամանակն է, և հեղինակը դադարում է գրել ոչ այն պատճառով, որ ամեն ինչ ասել է, այլ որովհետև հետո ուժը չի պատում, հետո չի կարողանում:

«Ներկան անտրոհելի է,- գրում էի ես նահանջելով:- Այն՝ ամեն ինչ է: Մենք կարող ենք հայացք ձգել նրա բաբախող մարմնին և տեսնել, որ նա կենդանի է: Նրա այդ մեզանից անկախ կյանքը՝ լիակատար դավաճանություն է, քանզի ներկան մեզ հետ առնչություն չունի, իսկ մենք մեզ վարժեցրել ենք ենթակայության՝ վերածնելով անցյալը: Միածույլ, անբաժանելի՝ արտացոլման փորձն աղքատիկ է ամեն ինչում. մեր ամեն մի փորձում արդեն մենք չէ, որ ինչ-որ բան ենք ապացուցում, այլ մեր փորձն է ապացուցում մեզ: Քանզի գոյություն ունեցող ամենայն ինչ չունի ավելի մեծ ապացույց, քան սեփական գոյությունը:

Ամենն այսպես է: Լյովան կա: Եվ ահա մենք դեգերում ենք միասին նրա ու իմ ներկա ժամանակում, որտեղ ամեն հաջորդ քայլը նախորդի անէացումն է և յուրաքանչյուրն այդ իմաստով ամբողջ ճանապարհի վերջնամասն է: Ուստի վեպի ներկա ժամանակը իրականությունը հետագծող ավարտների շղթա է, որով մենք ծայրեծայր ծակծկված-խոցոտված ենք: Ներկայի ցանկացած կետ անցյալի, բայցև ներկայի վերջն է: Աքիլլեսը երբեք չի հասնի կրիայի հետքից, մենք անկարող ենք խույս տալ այս լեմմայից:

Սակայն այս զզզված տեսքով դեն նետելով հերոսին, մենք չենք կարող ազատվել նրա նկատմամբ ունեցած մեղքի զգացումից: Հենց այդ մեղքն է ստիպում մեզ շարունակ հետաձգել վեպը, որպեսզի հասունանա նոր, մեզ դարձյալ չգոհացնող վերջը:

Այստեղ էլ երևան է գալիս այն բարոյական խնդիրը, կամ եթե ոչ խնդիրը, ապա հեղինակի և հերոսի փոխհարաբերություններին վերաբերող բացառիկ պարագան: Մեզ կասեն, թե հերոսը նյութեղեն չէ, տեսիլք է, մտքի ու երևակայության պտուղ, և այդ պատճառով հեղինակը նրա հանդեպ չի կրում նույն այն պատասխանատվությունը, ինչ կենդանի՝ միս ու արյուն ունեցող մարդու հանդեպ: Ճիշտ հակառակը: Կենդանի մարդը կարող է ընդդիմանալ, նույնով պատասխանել, մեզ դառնություն պատճառել... և վերջապես, օրենքը նրա կողմն է, և ես շատ կաշկանդված եմ ոչ հոդեղեն օտարի, քան մարդու հետ ունեցած վարվեցողության մեջ: Այնինչ, հերոսը հլուհազանդ է, նա ավելի քան ստրուկ է և նրա հանդեպ ունեցած վերաբերմունքը ավելի մեծ չափով է հեղինակի խղճի գործը, քան կենդանի մարդկանց հետ ունեցած հարաբերությունները:

Խենթի մեկն ամենայն լրջությամբ կարող էր հիմնել գրական հերոսներին իրենց հեղինակներից պաշտպանող ընկերություն: Եվ իրոք, հավիտյանս խիտ հատորներում կալանված այդ համր տառապյալների շարանը, այդ գունատ, ծայրաստիճան հյուծված, գրեթե անմարմին, իդեալների և կատեգորիաների դեմ գործած իրենց ոճիրներից սահմռկած ու ընդմիշտ տապալված անմեղ կալանավորներն անկեղծ կարեկցանք են հարուցում: Նրանք ավելի են արժանի կարեկցանքի, քանզի նրանց տառապանքը լոկ մասամբ են իրենցը. նշանակալից չափով դրանք մեկ այլ մարդու՝ հեղինակի տառապանքներն են: Սեփական արարչի տառապանքների հանդեպ հերոսի ունեցած գթասրտությունը, նրա համբերությունն ու հանդուրժողականությունը անօրինակ են, բացառիկ: Հերոսները կարեկցանք հարուցում, բայց չեն ստանում այն: Նրանք անմռունչ իրենց ուսերին կրում են ուրիշների բարոյախոսական, բարոյական, քաղաքացիական, սոցիալական և էլի որքան ասես խնդիրներ, որոնք նրանց անմարմին ուսերին են բարդում գրողները: Մի բան անվիճելի է. իր հերոսներից հեղինակը պահանջում է ավելին, քան ինքն իրենից՝ իրական կյանքում: Նրանց նկատմամբ ճակատագրի, հատուցման ու վրեժի օրենքներն զգալիորեն ավելի հստակ ու անվրեպ են գործում, քան կյանքում:

Միայն անցյալը կարելի է ապրել այն միակ եղանակով, որ կայացել է և այլևս ենթակա չէ սրբագրման և անցյալում է, որ մենք պատասխանատու չենք մեր հերոսի հանդեպ: Այնինչ իրականությունը փորձով ամրագրված չէ, և հեղինակային այն նենգությունը, որի դեպքում մենք գիտենք, թե ինչ է լինելու մեր հերոսի հետ, ոչ մի կերպ չի կարող զուգակցվել արդարության զգացման հետ, քանզի դա անծանոթ է նրան: Ի դեպ, երբեմն, ստեղծագործության ավարտին հերոսն սկսում է «կռահել», որ իր հետ առնչություն ունեցող չարի և ինչ-որ մեկի հեղինակային կամքի ուժերն իր համար ընտրել են կյանքի անխուսափելիության գեղարվեստական մանրամասներ. հերոսն

© National Library of Armenia

սկսում է փոքր-ինչ տրտնջալ, դիմադրել, երբեմն նույնիսկ (երջանիկ, ոգեշունչ օրինակ) նրան հաջողվում է ինչ-որ բան պարտադրել հեղինակին՝ մեծ կարևորություն չունեցող, փոքրիկ քմահաճույք... Բայց կխելագարվես, իմանալով, որ ոմն մեկը իր ձեռքով խախտում է սեփական և քանդում մեր կյանքը, կխելագարվես, որ մեկն իրավունք է վերապահել դառնալ մեր բախտն ու ճակատագիրը... Հենց այստեղ է, որ երբեմն հերոսը բռնում է հեղինակի ձեռքը. հեղինակը սթափվում է:

Վեպն ավարտված է, կյանքը շարունակվում է: Սակայն ինչի՞ հասանք մենք՝ միաձուլելով հեղինակի և հերոսի ժամանակները:

Արդյո՞ք այն ստեղծագործությունը չենք մենք վեպ համարում, որի վերջը նրա սկիզբն է: Այսինքն, գրողի կողմից հերոսի ներկա ժամանակի նվաճումը ցանկացած սյուժեի օբյեկտիվ վերջը չէ՞ արդյոք: Եթե այդպես է, ապա վեպն ավարտված է:

Հերոսի և մեր հայացքները հանդիպում են: Մենք վերհիշում ենք խանդոտի այն մոլոր-կասկածամիտ, դեռևս չապացուցված մեղադրանքով խանդի առարկային վիրավորել վախեցող հայացքը, իսկական զգացմունքով թաթավուն հայացքը, որ զուրկ է սակայն ձայնի իրավունքից. Լյովայի՝ ինձ վրա նետած տառապանքով լի հայացքը այն բարոյազուրկ (ճիշտ է՝ մեկ-միակ) պահին, երբ ես չդիմացա և հետաքրքրասիրություն հանդես բերելով, նայեցի նրան: Այդ մանկական հայացքին անհնար էր դիմանալ, և հեղինակը շփոթվեց ու գետին հառեց հայացքը:

... Այսպես է ապրում հեղինակը՝ գերագնահատելով իր հանդեպ ունեցած ուրիշների և թերագնահատելով սեփական զգացմունքները, և ժամանակն ընդհուպ մեզ է մոտենում: Մենք կանգնած ենք դեմ-դիմաց և արդարանում ենք նրանով, որ մոտիկից չենք տեսնում: Ապագայում մենք կարճատես ենք, անցյալում՝ հեռատես: Ախ, ակնոց նշանակեք ինձ համար: Լիսոիսին վա:

Եվ այժմ, հերոսին արհեստականորեն հեղինակի հետ առերես տեսակցության մղելով, մենք այլևս նահանջի տեղ չունենք. մեր ժամանակները վերջնականորեն համընկնում են, այս պահից սկսյալ մենք նրա հետ միասին ապրում ենք միևնույն ժամանակում՝ յուրաքանչյուրս մեր կյանքով, և մեր առօրյա տարածության մեջ զուգահեռները երբեք չեն խաչաձևվի: Այնպես որ, այդ կարճ տեսակցությունը բաժանում է: Ըստ էության, յուրաքանչյուր ժամադրություն, որքան էլ որ տխուր է...

Այն վաղուց նախատեսվել, այն վաղուց է կայացել... Երբ զուգաչափությունը լրիվ կառուցված էր, և անցյալը ներկայի հայելում տեսավ ապագայի արտացոլքը, երբ սկիզբը կըրկնեց վերջը և օղակվեց կարիճի պես, և սպառնալիքն իրականացավ հույսի մեջ, երբ վեպն ավարտվեց և սկսվեց հեղինակային կամայականությունը գետնատարած անշունչ մարմնի հանդեպ՝ նրան մեռած թողնելով անհեթեթ, դժբախտ պատահարից, թե՞ հարություն տալ ողջախոհության ու լավատեսության (իրապաշտության) ավանդույթների համաձայն՝ պատժելով զարթխումի (հատուցման...) օրենքներով,- այնժամ արդեն... և այն ժամանակից ի վեր (այնուամենայնիվ հարություն տալով), տառապելով պատահականությունից ու անսկզբունքայնությունից, հեղինակը սեփական կյանքից գողանում էր յուրաքանչյուր հաջորդ գլուխը և այն գրում բացառապես ի հաշիվ այն իրադարձությունների, որ հասցնում էին տեղի ունենալ նախորդը գրելու ընթացքում: Հեռավորությունը կրճատվում էր, և՝ սեփական շարժումների կարճատևությունը զավեշտական էր դառնում: Աքիլլեսը կոխրձեց կրիային, խշրտոցը լսվեց ներկայում, և այդ պահից սկսյալ... ապրել չես ուզում, որքան ծանր է, ահ, ծանձրանալով, հեղինակի վրա ծանրումեծ փլվեց նրա սեփական կյանքը: Իսկ ինչ ասել...

Թարգմանությունը՝
ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ՀԱԿՈԲ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ ԱՐԳԵՆՏԻՆՅԱՆ ՊԱՏՈՒՄԸ

Մարգարիտա Յախոնտովա

Այս պատմությունը սկսվել է երեք տարի առաջ: Ռեժիսոր Հակոբ Ղազանչյանը Բուենոս Այրեսում ծանոթացավ «Ժորժ Սարգիսյան» հայկական թատերախմբի հետ: Թատրոնը սիրողական է, նրա բոլոր անդամները հիմնական մասնագիտություն և աշխատանք ունեն, բայց նաև հնարավորություն՝ զբաղվել, ավելի ճիշտ՝ ծառայել այնքան սիրելի բեմարվեստին: Թատերախմբի ղեկավարը՝ Գալուստ Ջանսըզյանը, բարձրակարգ վարսավիր է: Լինելով Սփյուռքում հանրաճանաչ դերասան Ժորժ Սարգիսյանի հավատարիմ աշակերտը, նա ոչ միայն թատրոն հիմնեց՝ այն անվանելով սիրելի ուսուցչի անունով, այլև կարողացավ թատրոնի համար սեփական շենք ձեռք բերել: Կնոջ՝ պրոֆեսիոնալ դերասանուհի Հերմինեի հետ նա արդեն երկար տարիներ կայուն պահում է թատրոնը, որի մասին հաճախ են գրում արգենտինյան «Կլարին» և «Նասյոն» խստապահանջ և հեղինակավոր թերթերը:

Տեսարաններ ներկայացումից

Հ. Ղազանչյանի հրավերով թատերախումբը եկավ Երևան: Հյուրախաղերի ացան Պատանի հանդիսատեսի թատրոնում: Այդ մասին ավելի շատ գրեցին արգենտինյան, քան երևանյան թերթերը՝ «Կլարին» թերթի մշակութային մեկնաբան Օլգա Կոսենտինոն իր ընթերցողներին մանրամասն տեղեկացնում էր հյուրախաղերի մասին: Ավաղ, այդ ստեղծագործական նախաձեռնությունը համընկավ հոկտեմբերի 27-ի ողբերգության հետ և մեզ հուզում էին այլ հարցեր... Այդպես էլ աննկատ մնաց հյուրերի «Տատը» ներկայացումը, ինչպես նաև Պատանի հանդիսատեսի թատրոնում իրականացված Ռոբերտո Կոսսայի մեկ՝ այլ՝ «Պետք չէ լաց լինել» ներկայացումը (բեմ.՝ Հ. Ղազանչյանի):

Հյուրերը մեկնեցին, տարիներն անցնում էին. սա մեր օրերում անխուսափելիորեն նշանակում է փոխհարաբերությունների ավարտ: Ամենատարբեր բարդությունները քանդում են ամենալավ ծրագրերը, որոնք սկզբում թվում էին այնքան իրական, անհրաժեշտ ու շահեկան: Պետք էր ունենալ Հակոբի զարմանալի եռանդն ու համառությունը հեռավոր Արգենտինայի հետ կապը չկորցնելու համար: Եվ եղավ այն, ինչ չէր կարող չլինել. Գալուստ Ջանսըզյանը կրկին եկավ Հայաստան արդեն միանգամայն այլ բեմադրությամբ «Տատը» պիեսում գլխավոր հերոսուհու դերը խաղալու համար (բեմ.՝ Հ. Ղազանչյանի, «Բեմական խաչմերուկներ» մշակութային կենտրոն): Ներկայացման պրեմիերան հաջողությամբ անցավ Հ. Պարոնյանի անվան թատրոնում, նույն հաջողությունը նրան ուղեկցեց նաև Գյումրիում և Վանաձորում:

Սա Հ. Ղազանչյանի երկրորդ անդրադարձն էր Ռոբերտո Կոսսայի ստեղծագործությանը և այս անգամ այդ անունը դարձավ հայտնության նման մի բան հայ հանդիսատեսի համար: Այնինչ Ռոբերտո Կոսսան (ծնվ. 1934թ.) հայտնի անուն է, նրա պիեսները արդեն մի քանի տասնամյակ է՝ ոչ միայն արգենտինյան, այլև Լատինական Ամերիկայի շատ երկրների թատրոնների խաղացանկերից չեն իջնում, հաջողությամբ բեմադրվում են Եվրոպայում, առաջին հերթին՝ Ֆրանսիայում, որտեղ դեռևս 1977թ., «Տատը» պիեսը գրվելուց ընդամենը մեկ տարի անց, խաղացվեց Փարիզում:

Ռ. Կոսսան մոտ երկու տասյակ պիեսների, կինո և հեռուստասերիալների սցենարների հեղինակ է: Նա հաճախ ինքն է բեմադրում իր պիեսները, նրան հրավիրում են ամենատարբեր թատրոններ, նրա գեղարվեստա-դրամատիկական առեղծվածի մասին գրվում են բազմաթիվ ուսումնասիրություններ: Տարեցտարի հասունանում է Կոսսայի ասելիքը - ասում են ոմանք, մյուսները պնդում են, որ փոխվում է: «Ես ինձ բացահայտում եմ փորձարարությանը դիմելով ու կարծում եմ, որ այդ փորձարարությունները կատարվում են բնականոն, քանի որ պայմանավորված են դարաշրջանով և իմ տարիներով ու փորձով»- գրել է նա իր մասին:

Իր գրական ուղին սկսելով որպես ճշմարտացի կենցաղագիր, Կոսսան աստիճանաբար դառնում է բազմաշերտ ու բազմասելիք: Տարիների ընթացքում նրան սկսեցին անվանել մետաֆորիկ դրամատուրգ, գրոտեսկի ու աբսուրդի դրամատուրգ, սյուրռեալիստ: Այդուամենայնիվ, նրա պիեսներում, ինչպես զարմանահրաշ, բայց սովորական թվացող հայելիում, մշտապես արտացոլվում է ժամանակը: Միայն թե անսովոր, անսպասելի տեսանկյունով:

Այսպես. «Ոչ ոք չի հիշում Ֆրեդերիկ Շոպենին» պիեսում ընտանիքի անդամները, իբրև թե հավաքված միասին, իրականում ամեն մեկը մտածում է իր մասին, իր չիրականացած ու չկայացած կյանքի մասին: Նրանցից ոչ մեկին չի հետաքրքրում պատուհանից այն կողմ աղմկող քաղաքական հանրահավաքը, գուցե թե միայն աշխարհի հետ կապը վաղուց կորցրած ընտանիքի մորը, որին թվում է, թե ողջ քաղաքը հիշատակի տուրք է մատուցում Ֆրեդերիկ Շոպենին, քանի որ այդ օրը՝ հոկտեմբերի 17-ը, նրա մահվան օրն է, հիշատակման արժանի միակ իրադարձությունը:

«Տատը» պիեսում միջին ապահովության համերաշխ ընտանիքը զոհ է դառնում տան տատիկի անզուսպ որկրամոլությանը, որին սկզբում բոլորն են սիրում: Հեղինակի պահանջն է, որ տատիկի դերն անպայման պետք է տղամարդ խաղա: «Ժորժ Սարգիսյան» թատերախումբը հավատարիմ է մնացել նրա պահանջին և աներևակայելի գուներ, իրական Տատի կերպարը փայլուն կերպով մարմնավորել է Գալուստ Ջանսըզյանը:

Հ. Ղազանչյանը «Տատը» բեմադրել է միանգամայն այլ մեկնաբանությամբ: Էապես կրճատելով տեքստը (երբեմն՝ ավելի քան շատ, հատկապես առաջին մասում), նա պիեսից հանել է կենցաղային մանրամասնությունները: Խաղաղ կյանքի ոչ մի զգացողություն. առաջին իսկ րոպեներից հանդիսատեսն զգում է ավագ եղբոր՝ Կարնելլոյի (Արայիկ Մաթևոսյան)՝ մոտեցող վտանգն զգացողի տագնապը և կրտսեր եղբոր՝ Չիչոյի (Տրդատ Մարգարյան) սենտիմենտալ անհոգությունը: Մի քանի վիեննական աթոռներ, որոնք մի շարքով շարված են համարյա նախաբեմում: Ներկայացումը հիմնականում գրաֆիկական է, խորության պահանջ չի դրված: Բայց այդ խորությունն, այնուամենայնիվ, ստեղծվում է՝ փափուկ կիսախավարի մեջ ընկղմված կահավորանքը (նկարիչ՝ Գրիշա Սահակյան) կեսդարյա հնություն ունեցող համեստ հարմարավետության հիշեցումն է: Սա երազի ու երազանքի մեջ ընկղմված ժամանակն է, որ կա: Բեմական հորիզոնի ամենաեզրին, մեջքով դեպի հանդիսականը նստած է սևազգեստ կինը (Լարիսա Ղևոնդյան)՝ եկած ասես անցյալից, իսկ գուցեև այսօրվանից, և անմասնակից նվագում է ինչ-որ անավարտ թեմա, որն, այնուամենայնիվ, տանգոյի ոգին է պահում իր մեջ: Հիասքանչ ու ճկուն աղջիկը (Մարիամ Ղազանչյան) ժամանակ առ ժամանակ բեմի մի կողմից մյուսն է անցնում արտասովոր, կիսապարային շարժումներով: Երիտասարդ, կյանքով լի, նա, սակայն, անսխալ ընկալվում է որպես կործանման նախանշան:

Աննկատելի աղքատանում են նախ կերպարների նրբաճաշակ կոստյումները: Դերասանները խաղում են անսամբլային, պահպանելով տրված ոճն ու կերպարների միջև եղած հավասարակշռությունը: Որոշակի արտառոցությունն առանձնացնում է դոն Ֆրանսիսկոյին (Արմեն Սանթրոսյան) ու Չիչոյին: Ոչ մի սենտիմենտալություն, բայց ինչ հուզիչ է Մարթայի (Սուսաննա Բաղդասարյան) ու նրա մոր (Անահիտ Բաբեյան) վախճանը, Անժուլայի հեռանալը (Արևիկ Սանթրոսյան): Եվ Չիչոյի տպավորիչ կրակոցը այդ ոչ սովորական ընտանեկան պատմության, իսկ իրականում՝ սոցիալական աղետի վերջակետն է դնում ոչ առանց սարկաստիկ ժպիտի:

Գալուստ Ջանսըզյանի Տատը այդ մարդկանց կյանքում անողոք տերուտիրական է, կարծես աղետ լինի: Այդ մշտապես ժպտացող, սևազգեստ, սպիտակ մազերը խնամքով հարդարված կերպարը, որին ոչինչ չի հուզում, ինչ-որ բան գտնել-ուտել-կուլ տալուց բացի, ժպիտ է հարուցում, բայց այդ ժպիտի ետևում անհաճո և անհանգիստ մի միտք է՝ ո՞վ է Ռոբերտո Կոսսայի այդ Տատը, որն իր ընտանիքը հասցրեց սնանկացման ու վերջնական կործանման: Այդ հարցի շուրջ վիճում են, տեսություններ առաջ քաշում: Գոյություն ունի պատմա-քաղաքական բնույթի ենթադրություն: Բայց ինչպես ցանկացած մետաֆոր, առավել ևս այսքան գրոտեսկային, այս մեկն էլ կարող է տարբեր մեկնաբանություններ ունենալ:

Թող ամեն մեկը հասկանա իր կարեցածին չափով, իսկ բոլորս ուրախ ենք պարոն Գալուստի համար, ում բախտ վիճակվեց խաղալ հայրենիքում, պրոֆեսիոնալ դերասանների հետ, ու մենք հավատում ենք, որ Հակոբ Ղազանչյանի արգենտինյան պատումը շարունակություն է ունենալու:

© National Library of Armenia

ՀԱՅԱՑՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

ՊՈԼ ՎԱԼԵՐԻ
(1879-1945)

Չկա մի կուսակցություն, որ դաված չլինի սեփական հայրենիքին:

•

Ահա այն, ինչի առիթով ցանկացած կուսակցություն խուսափում է բացատրություններ տալ.

ա) յուրաքանչյուրն ունի իր մասնահատուկ ստվերները՝ իր պահեստային ուժերը

բ) արյունոտ դիակների գետնափորներն ու ամոթալի տենչանքների իր գաղտնի նկուղները

գ) թեթևամիտ խոսքերի ու անկշռադատ արարքների իր գանձերը,

դ) ինչը նա մոռացել է իր նպատակների մեջ և ինչը կուզենար մոռացության տալ:

•

Նրանք ձեռնպահ են մնում կյանքի կոչելուց այն, ինչի գոյությունն ապահովելու համար խոստումներ էին տալիս:

Իշխանության հետ նրանք իրար արժեն, իշխանությունից դուրս էլ նրանք արժեն իրար:

•

Պետք չէ տատանվել անելու համար այն, ինչը ամրապնդում է ձեր համակիրների մի մասի կախվածությունը ձեզանից և ինչը եռապատկում է մնացածների սերը ձեր նկատմամբ:

•

Այն, ինչը դուր է գալիս սեփական քաղաքական կուսակցության մեջ՝ տեսլականի (իդեալի) անորոշությունն է: Մյուսը, որ նույնքան հաճելի է աչքի առաջ ունենալ, առաջիկա խնդիրների որոշակիությունն է:

•

Ողջ քաղաքականություն կոչվածը հիմնվում է շահագրգիռ անձանց մեծամասնության *անտարբերության* վրա, առանց որի քաղաքականությունը երբեք չի կարող հնարավոր դառնալ:

•

Սկզբնական շրջանում քաղաքականությունը հանդես է գալիս որպես իրեն զննող աչքի հետ միախառնվելուց մարդկանց մի խմբին հեռու պահելու վարպետություն:

Հաջորդ փուլում սրան ավելանում է վարպետությունը՝ մարդկանց հարկադրելու վճիռ կայացնել իրենց համար անհասկանալի բաների մասին:

Այս երկրորդ սկզբունքը զուգամիտվում է առաջինին:

Ահա և նրանց համակցման արդյունքներից մեկը. ընդհանուր ընտրական իրավունքի երկրներում գոյություն ունեն պետական գաղտնիքներ: Զուգակցումն անհրաժեշտ է և, արդյունքում, կենսունակ, բայց այն երբեմն մեծ փոթորիկներ է առաջ բերում, որը կառավարություններին ստիպում է առանց շունչ առնելու կամ ձեռքերը ծալելու շարունակ մանևրել: Իշխանությունը միշտ հարկադրված է իր սկզբունքների դեմ թիավարել: Նա կառավարում է սկզբունքից հնարավորին չափ աննշան շեղումով՝ բացարձակ լիիշխանության ուղղությամբ:

•

Բոլոր հասարակական կազմակերպվածքները պատրանքների պահանջ են առաջադրում:

Մի հասարակարգում համաձայնության են գալիս քաղաքացիների անհավասարության մասին: Մյուսում նախօրոք պայմանավորվում և կազմակերպում են հավասարությունը:

Սրանք են այն նախապայմանները, որ հարկավոր են խաղը սկսելու համար: Հենց որ մեկը կամ մյուսը հաստատվում է թե չէ, խաղն սկսվում է, որն անհրաժեշտաբար կայանում է անհատների կողմից անընդհատ ու հակընդդեմ գործողություններ ձեռնարկելու մեջ:

Հավասարների հասարակության մեջ անհատը գործում է ընդդեմ հավասարության: Անհավասարների հասարակարգում ամենամեծ թվով մարդիկ աշխատում են ընդդեմ անհավասարության:

•

Քաղաքական պայքարի արդյունքը ուղեղներում շփոթ առաջացնելն է ամենամեծ կարևորության «խնդիրների» և արտակարգ միջոցառումների հասկացության կեղծումը:

Այն, ինչ կենսական կարևորություն ունի, փոխարինվում է նրանով, ինչը պարզապես կարող էր լինել: Ինչը ապագային է վերաբերում՝ օրվա խնդիր է հայտարարվում: Այն, ինչ հրատապ է ու անհետաձգելի՝ նրանով, ինչը շոշափելի է ու զգայելի: Այն, ինչ խորն է ու դանդաղընթաց է ենթադրում նրանով, ինչը գրգռիչ է ու հրահրող:

Այն ամենը, ինչը գործնական քաղաքականությանն է վերաբերում, անհրաժեշտաբար մակերեսային է ու ոչ խորը:

•

Անկարելի է «քաղաքականություն անել» առանց սեփական կարծիք հայտնելու բոլոր այն խնդիրների առթիվ, որոնց մասին ոչ մի ողջախոհ մարդ չի կարող իրեն թույլ տալ ասելու, թե ինքը գիտի: Պետք է հիմար լինել կամ անսահման տգետ՝ համարձակվելու համար կարծիք հայտնել խնդիրների այն մեծամասնության առթիվ, որ առաջադրում է քաղաքականությունը:

•

Կարծիքներ:

Ողջ կարծիք կոչվածը պարզագույն թարգմանություն-մեկնաբանությունն է հակընդդեմ կամ թշնամաբար ասված կարծիքի: Եթե գործողությունների դիմելը ամենահեշտերից մեկը չլիներ, ուղեղի ծուլությունը նրան խաղադաշտը բնավ չփոխելուն կառաջնորդեր:

Քաղաքական կամ արվեստական կարծիքը պետք է այնքան անսահմանորեն անորոշ լինի, որպեսզի միևնույն արտաքին երևույթի, թվացողականության քողի տակ միևնույն անհատը այն մշտապես իր նախատրամադրությանը և սեփական շահերին հարմարեցնել կարողանա. արդարացնել իր գործողությունը. «բացատրել» իր կատարած ընտրությունը, ընդունած որոշումը:

•

Ես ճանաչում էի մի տարօրինակ, զվարճալի արարածի, որը հավատում էր այն ամենին, ինչ կարդում էր մի որոշակի ամսագրում, և ոչ մի բանի, ինչ մեկ ուրիշում էր ընթերցում:

Դա օրիգինալ մեկն էր. ընդսմին՝ գաղջահոտող ու լճացած տեսակի:

•

Պատմաբանն անցյալի նկատմամբ կատարում է նույնը, ինչ որ խաղաթղթերով բախտ բացող գուշակուհին՝ ապագայի հանդեպ: Բայց հենց կախարդուհու նկատմամբ է ստուգման հարց բարձրացվում և ոչ պատմաբանի:

•

Քաղաքական բացահայտում:

... Մարդը բարձրանում է ամբիոն: Աղմուկ-իրարանցում, «չարացած ու անհաշտ» ընդդիմություն և այլն:

Սկսում է խոսել... Սա բանավե՞ճ է: Սակայն կամաց-կամաց մտքի աշխատանքն իրեն զգացնել է տալիս՝ ուշադրությունը գրավելով: Եվ հենց մտքի աշխատանքն է, որ բացահայտում է իրեն: Այլևս չկան հեշտ լուծումներ, պարզ բանաձևումներ, չկան քաղաքական ծրագրեր, չկա հնարավոր պառլամենտական մարտավարություն, չկան մտքի վայրկենական լուսաձառագումներ, հաղթական հակահարվածներ...

Այլ հորինաստեղծ ու ինքնավստահ հսկայական դժվարություններ. ապագան անհայտ, ներկան թյուր ճանաչված, տրամաբանությունն անբավարար, գիտելիքները թերի, խորաթափանցությունը պակասավոր, առարկան անբռնելի ու անորսալի, խոսքը կոպտատաշ, անվայելուչ, վճիռը միշտ պատահական... Այն ամենը, ինչ դիմակավորում է ճառասացի արվեստը, ինչպիսին որ այն կա մտքի մեջ, նույնական է բացահայտելիք առարկաների իրական խառնաշփոթին...

•

Իշխանությունը և փողը անսահմանության գրավչությունն ունեն. մեկի կամ մյուսի, կամ գործունեության այս կամ այն ընդունակության համար չէ, որ ցանկություն են ունենում դրանց անտեղիտալի տիրապետելու: Ոչ ոք խենթանալու աստիճան չի տենչում ողջամիտ կամ չափավոր իշխանության. ո՛չ կառավարության կենսագործունեության իրականացումն է որպես պարզ ու հստակ, կանոնակարգված մասնագիտություն դիտարկվում, ո՛չ էլ փողը՝ որպես հստակագույնս որոշարկված առարկաների արժեք:

Սակայն հենց իշխանության անսահմանությունն է, որ մեծ ցանկություն է ծնում, որովհետև ես երբեք չգիտեմ, թե ինչ ցանկություններ կարող են իմ մեջ ծնունդ առնել: Ես երբեք չեմ տենչում այն, ինչը հաշվարկված է, և ուզում եմ գնել միայն այն, ինչը չկա վաճառքում:

Ահա թե ինչու բոլորը գերիզոր և մեծահարուստ մարդու մեջ միշտ էլ մի երջանիկ խաղամոլի են տեսնում: Մի արտակարգ հաջողակություն է ենթադրվում այդ մեծամեծ հարստություններին կուտակման սկզբնափուլում: Ո՛չ թափած ջանքը, ո՛չ էլ ավարտին հասցված տքնաջան աշխատանքի արդյունքը չի թվում, թե կարող է այդ մեծությանն առաջնորդել, որ պատկերանում է այնկողմնային ու կատարյալ:

Վերջապես, իշխանության չարաշահման, գերազանցման հենց այդ բնազդն է, որ այնպես կրքոտությամբ երազել է տալիս իշխանության մասին: Իշխանությունն առանց գերազանցման կորցնում է իր հմայքը:

•

Պետությունը, այդ ԵՍ-ը:

Խոսում է մարդը:

Չի կարելի, որ գայլը գառանն ուտի: Դա անբարոյականություն է... Որովհետև այդ ԵՍ պետք է գառանն ուտեմ:

Չի կարելի, որ մոլախոտը խեղդի բարի ցորնահասկին: Քանի որ այդ ԵՍ պետք է փշրեմ բարի հատիկը:

Այսպես է խոսում մարդը: Բայց, էլ ավելի բարձր, այսպես է խոսում ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

•

Գայլը կախման մեջ է գտնվում գառից, որն էլ իր հերթին կախված է խոտից:

Խոտը միայն հարաբերակցորեն է պաշտպանվում գայլի կողմից: Գիշատիչ կաթնասունը հովանավորում է խոտին, որն իրեն կերակրում է անուղղակիորեն:

•

Ծեր գայլերի միջև ճակատամարտը շատ ավելի դաժան է, ավելի խորամանկ ու նենգամիտ, բայց նրանում նաև հանդիսավորության մի պահ կա:

•

Հարևանների առկայությունը հավերժական քաղաքացիական պատերազմից խուսափելու ազգերի միակ երաշխիքն է:

•

Մեծ, աղմուկ հանած իրադարձությունները գուցե այդպիսիք են թվում միայն փոքրիկ ուղեղների համար:

Ավելի լրջմիտ ուղեղների կողմից հենց անզգայելի, աննկատ ու տևականության դրոշմը կրող իրադարձություններն են, որ հաշվի մեջ են մտցվում:

•

Իրադարձությունները ծնունդ են առնում անծանոթ հորից: Անհրաժեշտությունը լոկ նրանց մայրն է:

•

Իրավունքը ուժերի միջնադարն է:

Ֆրանսերենից թարգմանեց՝
ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ

© National Library of Armenia

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԳԱՐ ԵԱՐԱՊԽԱՆԵԱՆ

Հայաստան այցելութեան գալդ քեզի համար անցեալիդ հետ հաղորդութիւն մըն է հոգեկան: Ամէն ինչ հոս՝– հողը, ջուրը, քարը, ոգին - առինքնող ուժականութիւն մը կը ներփակեն իրենց մէջ: Աչքդ կը դիտէ, իսկ միտքդ ակամայ կը սուզուի անցեալիդ պատմութեան մէջ, քեզ տանելով երբեմն մինչեւ ընդերքը արմատներուդ: Մտային ճամբորդութիւններու ոլորտին մէջ կը զգաս ինքզինքդ:

Ներկայի իրականութիւններէն անդին (որոնք երբեմն չեն խանդավառեր քեզ) գալիք օրերու այլ իրականութիւններ կը պարուրեն ներաշխարհդ, կը յուսադրեն քեզ, մտածումներդ անգոյ աշխարհի մը մէջ փոխադրելով: Յոյսը կը տիրապետէ ներսիդիդ: Վերազարթնումներ կը զգաս մէջդ: Նոր դէմքեր ու դէպքեր կը ցցուին՝ տեսածներուդ ու ներկային ընդմէջէն: Կը խօսին քեզի տարբեր լեզուներով ու վեր կը մղեն քեզ այս ծղծիմ մակերեսէն, որ նիւթապաշտ է ու անձնակեդրոն: Կը յուսաս: Ու կամայ կը մտածես – «արդեօք այս հոգեվիճակդ խաբկանքի՞ մը արդիւնքն է»: Վստահ չես: Չես ուզեր անստուգութեան մէջ մխրճել ինքզինքդ: Ու կը քալես...

Տարօրինակ տխրութիւն մը սակայն, անմխիթար բաւիղներու մէջ կառաջնորդէ քեզ, որոնց անտեղեակ ես դուն: Կ'ուզես հաշտուիլ ներկային հետ,– տեսածներուդ ու լսածներուդ հետ–, որոնք օրն ի բուն կը մրճահարեն միտքդ, երազէն դէպի իրականութիւն մղելով քեզ:Հոգեկան եւ մտային յարատեւ պայքարներու մէջ ես: Ողջ էութեամբդ կը վերադառնաս ներկային: Նոյն հմայքը սկիզբի չես զգար: Հիասթափութիւն մը կը հալածէ հոգիդ, հակառակ իրողութեան, որ ներկան ալ խանդավառութեան արժանի գործեր ունի կատարած: Ճիգեր ունի տեսանելի: Կը ձգտիս կրկներեւոյթներ փնտռել, պուտ մը անցեալ որոնել 1988-ի տարիներէն, խիզախութիւններ մտաբերել, հայրենասիրութիւն, ազգաշինութիւն, անձնազոհութիւն, ու կ'իյնաս լաբիրինթոսային ոլորտներու մէջ: Բազմաձիւղումներու մէջ ես, անելներու: «Էս էլ կ'անցնի», կ'ըսես տեղական շեշտով, ու կը խառնուիս հետզհետէ նօսրացող ժողովրդիդ մէջ:

Հարցումներ ու վերստին հարցումներ կ'ալեկոծուին մէջդ: Չանոնք գոհացնելու պերճանքը չունիս: Անզօր ես ու անտեղեակ: Քեզմէ անջատ, քեզմէ անկախ ճշմարտութեան մը մէջ ես: Ամէն ինչ տարօրինակ կը թուի քեզի, հակառակ իրականութեան մէջ շնչելուդ: Ինչուներու տարափը գանկիդ մէջ կը քալես քաղաքի մայթերէն: Չես յանդգնիր փողոց իջնել: «Օտար» կը զգաս, հակառակ քաղաքի բանալիներէն մէկը գրպանիդ մէջ ամուր մը պահ դրած ըլլալուդ: Հակառակ ունեցած տեղական անձագրիդ:

Նորածեւ այլանդակութիւններու ականատեսը կ'ըլլաս: Դրդապատճառները նիւթականէն անդին չես տեսներ: Հոգիդ կ'արիւնի ի տես այս բոլորին, բայց կը շարունակես քալել...

Ծաւալուն, անխօս եկեղեցի, որ իր արտաքինով կարծես կ'ուզէ իշխել վրադ, բայց չի յաջողիր: Քարէն անդին են քու մտահոգութիւններդ: «Միյիոններու վատնում,– կը մտաբերես,– անգործ ու անկերպարան, յաճախ հացի կարօտ ժողովուրդիդ սրտին վրայ կառուցուած»: Հոգեկան սնունդ՝ փոխան կենարար սնունդի: Ցասումդ զսպած կը մըտնես ներս: Կ'ուզես ներամփոփուիլ ու չես յաջողիր: Քիչ առաջ մուրացկաններ վրդովեցին քեզ: Բնազանցական աժան խօսքեր կը լսես խոնարհ: Ականջներդ կը յորդին անոնցմով: Կիներ են ունկնդիրները. ոմանք սեւազգեստ. լաչակաւոր: Այրեր շատ չես տեսներ: «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»: Լաչակաւորները հերթով կը մօտենան պարարտատես պատարագիչին: «Անօթի» են հոգեւոր խօսքին: «Գէթ վերացական սնունդով թող սնանին», կը մտածես, ու ինքզինքդ դուրս կը նետես աղօթավայրէն: Մինակ չես, համախոհներդ շատ են դուրսը, գործակիցներդ սակայն, չկան, գրեթէ անգոյ են: Ու կը շարունակես քալել առանձին...

Ներկայութիւն մը չես դուն արենակիցներուդ մէջ: Չակերտաւոր «օտարական» մըն ես, հինէն մնացած, հնգատառ ու անպատկառ բառով մը խարանուած ծակտիդ: Բայց չես յուսահատիր: Յուսալի հոգիներ կը փնտռես: Տաք սրտեր: Թէեւ առանձին՝ բայց կը շարունակես քալել: Ապրիլ կ'ուզես ու մանաւանդ ապրեցնել: «Վերջ խեղկատակութեան, կեղծաւորութեան, փոքրոգիութեան», կը մտածես ու ակնարկդ կը սեւեռես ձիւնափառ Արարատին: Կարծես վերջին յոյսդ ըլլար ան:

Նայուածք մը եւս կը նետես աղօթավայրին վրայ: Հեռու ես այժմ իրմէ: Հանգուածային կերպարանքը տակաւին կը ճնշէ վրադ: Ան կը տիրապետէ նաև քաղաքին վրայ, մակերեսաբար՝ ոչ էութեամբ: Ակամայ կը մտաբերես առաջին քրիստոնեայ ազգ կոչուիլդ: Անոր զաւակը ըլլալուդ պատրանքը կը մտրակէ հոգիդ: Քիչ առաջուան լսած առ երեսային խօսքերը, դողի մը նման կ'անցնին ողնաշարէդ: «Քրիստոնէութիւն: Մարդասիրութիւն: Անդրանիկ ազգ»:

Ճամբուդ երկայնքին՝ վրդովեցուցիչ պատահարներ: Մայրեր՝ երեխան գրկին, պատանիներ ու պարմանուհիներ, խռպոտ ձայնով պառաւներ, երիտասարդ աղջիկներ՝ սիկարէդը իրենց ձեռքին, փողոցին մէջ կամ մայթին կանգնած, պաղատագին կեանք կ'աղերսեն անցորդներէն: Յոյս: Միւսներուն նման չես դարձեր

ՓՆՏՐՎՈՒՄ Է

ՄԻԵՐ - Ո՞վ:

ԳԱԳԻԿ - Քեզ անուն-ազգանունն է հետաքրքրում:

Մ. - Ինչացո՞ւ է:

Գ. -Բարդ հարց է:

Մ. - Ինչո՞ւ է փնտրվում: Իրեն ի՞նչ է եղել, որ:

Գ. - Ամեն կորած փնտրվում է:

Մ. - Տրամվայից չի՞ իջել:

Գ. - Չգիտեմ ինչու՝ մի ֆիլմ հիշեցի. «Ուժասպառ ձիերին սպանում են, այնպես չէ՞»... Սա որպես կերպար...

Մ. - Մեղա, մեղա: Ուժասպառ ձիերն ի՞նչ կապ ունեն:

Գ. -Որպես կերպար:

Մ. - Ինչո՞ւ, ձի՞ է:

Գ. -Իսկ ինչո՞ւ ոչ:

Մ. - Լավ, գոնե անուն ունի՞:

Գ. -Ասենք՝ Քերոբ:

Մ. - Դա ավելի շուտ գողական տիտղոս է:

Գ. - Ուրեմն՝ Սերոբ... բայց հաջող չի:

Մ. - Էնպիսի անուն է պետք, որ մարդիկ հավատան:

Գ. -Արմեն Խաչատրյան:

Մ. - Ո՞ր մեղքի համար:

Գ. -Արմեն Մահտեսյան:

Մ. - Իսկ մարդը չի՞ կարող մարդավարի անուն ունենալ:

Գ. - Հակոբ Հակոբյան:

Մ. - Հո Աստալայի ղեկավարը չի՞:

Գ. - Արմեն Շմավոնյան. ընկերոջս անունն է:

Մ. - Չի նեղանա՞:

Գ. - Բա ի՞նչ կանի: Վիլիկ Շմավոնյան:

Մ. - Այդ դեպքում հայրանունն էլ պիտի ունենա:

Գ. - Վիլիկ Ռաֆիկի Շմավոնյան:

Մ. - Իսկ ինչո՞ւ ոչ Արմենի:

Գ. - Մերնդային իմաստով սխալ կլինի:

Մ. - Վիլիկ Ռաֆիկի Շմավոնյանը՝ ծնված... ծնվել է, չէ՞:

Գ. - Բա ո՞նց:

Մ. - Էդ ե՞րբ:

Գ. - Հիսունութ թվին:

Մ. - Քո ծննդյան թիվն անպայման պիտի մեջտեղ գցեիր: Որտե՞ղ:

Գ. -Երևանում:

Մ. - Ինչի, ուրիշ տեղ չկա՞:

Գ. - Բաթումի:

Մ. - Ո՞նց է կորել:

Գ. - Տանից դուրս է եկել և չի վերադարձել, Խաչատուր Աբովյանի պես:

Մ. - Ասենք՝ սույն տարվա ապրիլի 13-ի առավոտյան:

Գ. - 13-ը լավ թիվ չի:

Մ. - Ապրիլի 11-ին, ինն անց երեսունյոթ րոպե...

Գ. - Ինն անց երեսունի սահմաններում:

Մ. - Վերջին անգամ տեսել են...

Գ. -Մի րոպե: Նախ պետք է ճշտել, թե ինչ սոցիալական և ինտելեկտուալ կարգավիակ ուներ տուժողը:

Մ. - Ինչ կապ ունի:

Գ. - Հենց էնտեղ էլ կորել է:

Մ. - Մարդը չի կարո՞ղ պարզապես կորչել:

Գ. - Փորձը ցույց է տալիս, որ՝ ոչ: Սոցիալական տարբեր խավեր անհետանում են համապատասխան վայրերում:

Մ. - Էդ ո՞նց:

Գ. - Շատ պարզ: Հարուստը՝ Պռոշյանի վրա, մտավորականը՝ Կինո «Նաիրի», մնացածը՝ ԳՈՒՄ:

Մ. - Չի ասվի: Մարդ կարող է էնպիսի տեղում կորչի, որ ինքն էլ չէր սպասում ու էնպիսի տեղում գտնվի, որ...

Գ. - Երևանցիները կորչում են վերոհիշյալ երեք վայրերում:

Մ. - Ենթադրենք մտել է Բարեկամության անցումն ու մյուս կողմից դուրս չի եկել:

Գ. - Բարեկամությունը կոմունիստական է. թող երիտասարդականի անցումը լինի:

Մ. - Թող լինի, չնայած դա էլ կոմերիտական է: Իսկ ո՞վ է նրան տեսել:

Գ. - Նա, ում վրա ամենից շատ կասկած կա: Սիրուհու ամուսինը:

Մ. - Ինչ, Վիլիկն ամուսնացե՞լ է:

Գ. - Համ էլ բաժանվել է:

Մ. - Բա երեխե՞քը: 58 թվի տղեն կամ ամուսնացած պիտի լինի, կամ...

Գ. - Գրում ենք ամուսնալուծված:

Մ. - Վերջին անգամ իրեն տեսել են երիտասարդականի անցման և ԳՈՒՄ-ի մոտ միաժամանակ:

Գ. - Նույն օրը, նույն ժամին:

Մ. - Բա ո՞նց:

Գ. - Վայ թե չհավատան: Վերջը շուն թե գել՝ քաղաքի տղա է...

Մ. - Էդ հարց է: Մնաց մասնագիտությունը: Կորչելու տեղը դրանից է կախված:

Գ. - ԺԷԿ-ի աշխատող:

Մ. - Հո չասիր:

Գ. - Լույսի մարդ:

Մ. - Էլեկտրիկն էլ մի բան չի: Տեղամասի պետը զզվելի է: Վարսավիրանոցի տնօրեն:

Գ. -Հանձարեղ է: Քանի՞ աշխատող ունի:

Մ. - Երեք կին:

Գ. - Երեքին է՞լ...

Մ. - Ինչո՞ւ ոչ:

Գ. - Վարսավիրանոցում գոնե մի տղա չլինի՞:

Մ. - Երկու կին, մի տղա:

Գ. - Լավ, բա երկու տեղ ո՞նց են տեսել:

Մ. - Մի տեղ սիրուհին է տեսել, մի տեղ՝ սիրուհու ամուսինը:

Գ. - Այսինքն մեկը սուտ է ասում:

Մ. - Երկուսն էլ:

Գ. -Կարո՞ղ է՝ գլուխը կերած լինեն:

Մ. - Էս երկրում ամեն ինչ հնարավոր է:

Գ. - Ո՞չ յարին է պետք, ո՞չ կնոջը՝ բա հայտարարությունն ո՞վ է տալիս:

Մ. - Տղան:

Գ. - Ո՞ւմ է պետք այդպիսի հայրը:

Մ. - Աղջկան:

Գ. - Աղջկան չի՞ լքել:

Մ. - Աշխատանքը կորցրել է, կինն էլ բաժանվել է՝ մեղադրելու չի:

Գ. - Թող վարսավիրանոցի կոլեկտիվը հայտարարություն տա:

Մ. - Հայ ազգի մեջ հայտարարությունը պիտի հարազատը տա:

Գ. - Ուրեմն՝ սիրուհին:

Մ. - Սիրուհին էլ թասիբ ունի: Հայտարարությունը աղջիկն է տալիս, բայց սիրուհու թելադրանքով:

Գ. -Արտաքինը նկարագրո՞ւմ ենք:

Մ. - Ոչ ցայտուն արտաքինով:

Գ. - Հո չասիր: Թող հայի քթով լինի:

Մ. - Քիթը փիլիսոփայական կատեգորիա չէ:

Գ. - Պետք էլ չի: Գտնողն ո՞ւր պիտի զանգի:

Մ. - Ըստ պատկանելության:

Գ. - Կոնկրետ:

Մ. - Ջհանդամի գյոռը:

Գ. - Քաղմաս: Գումարի հարցը ո՞նց է:

Մ. - Քաղմասը փող տա՞:

Գ. - Ձրի ոչ ոք չի հայտնի:

Մ. - Ինչն է շատ՝ հայտնողը:

Գ. - Վերջում գտնվո՞ւմ է:

Մ. - Չի ասվի: Կարող է գտնեն, բայց պարզվի՝ ինքը չի:

Գ. - Կամ միանգամից մի քանի հատ գտնեն:

Մ. - Ու ոչ մեկը վարսավիր չլինի:

Գ. - Կամ վարսավիր լինի, բայց տղա չլինի՝ անունն էլ...

Մ. - Եթե վարսավիր է ու կին, ուրեմն՝ Ստելլա: Սանթրոսյան Ստելլա Հաբեթնակի:

Գ. - Տարի՞քը:

Մ. - 28-ի կողմերը, որ համ շատ ջահել չլինի, համ էլ...

Գ. - Մեծ կրծքերո՞վ:

Մ. - Չէ, երկար ոտքերով:

Գ. - Կրծքերը մե՞ծ են:

Մ. - Հարմար:

Գ. - Չեն հիշի: Ամուսնացա՞ծ է:

Մ. - Ամուսնացած կինը հասարակության համար կորած է:

Գ. - Տուն չի վերադարձե՞լ:

Մ. - Իսկի գործի էլ չի ներկայացել:

Գ. - Շեֆի հետ պոկվել են Լոս, կամ էլ Տագանռոգի կողմերը...

Մ. - Դարձրիր հնդկական կինո: Կարող է սեպտեմբերի 11-ին սխալ ինքնաթիռ են նստել: Մի երկու հայ չլինի՞ էդքան զոհի մեջ:

Գ. - Բրազիլական սերիալ: Որ չմեռնեն՝ չի լինի՞:

Մ. - Թե կորել են՝ չպիտի գտնվեն:

Գ. -Երկուսից մեկը թող ողջ մնա...

Մ. - Թե կին ու տղամարդ են, ուրեմն՝ Ռոմեո և Ջուլիետ: Երկուսն էլ պիտի մեռնեն:

Գ. -Ստելլայից ի՞նչ Ջուլիետ:

Մ. - Գոնե Տրիստան և Իզոլդա:

Գ. - Օրինակ, ես չեմ կարդացել:

Մ. - Ես կարդացել եմ՝ չեմ հիշում: Ծայրահեղ դեպքում՝ Լեյլի և Մեջնուն:

Գ. - Մեջնունը հեչ: Խեղճ Ստելլային ինչու են խփում:

Մ. - Ձեռի հետ: Կարևորը մեռնեն, թե ո՞նց՝ հետո կերևա:

Գ. - Բեր պսակենք քիլլերի հետ:

Մ. - Հնդկական կինո:

Գ. - Բրազիլական սերիալ:

Մ. - Տեղեկությունների համար դիմել...

Գ. - Գագիկ Կիլիկյանին և Միեր Բելլերյանին...

Մ. - Անպայման քեզ պիտի առաջ գցեիր...

Լույս է տեսել «Դրամատուրգիա» գեղարվեստական հանդեսի 4-5 միացյալ համարը: Առաջին անգամ տպագրվել են Զորայր Խալափյանի, Ալեքսանդր Թոփչյանի, Երվանդ Մանարյանի, Վարուժան Նալբանդյանի, Ալեքսանդր Հովսեփյանի, Կարինե Խոդիկյանի, Սամվել Խալաթյանի, Գևորգ Սարգսյանի, Աստղիկ Սիմոնյանի, Վահան Վարդանյանի, Գևորգ Կարապետյանի, ինչպես նաև Պոլ Դելվոյի և Ալեքսանդր Զորինի պիեսները:

ՀՅՄ քարտուղարությունը ցավակցում է Ալլա Սարգսյանին, սիրելի մոր՝ Լուսիկ Սարգսյանի մահվան առթիվ:

Գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տան աշխատակազմը ցավակցում է Ալլա Սարգսյանին, սիրելի մոր՝ Լուսիկ Սարգսյանի մահվան առթիվ:

Խարիսի անկյուն

ԸՆԴԱԶԳԱՅԻՆ

Ամբոխն ուզում է փոփոխականություն: Բնակչությունն ուզում է կենսամակարդակ: Ազգն ուզում է փաստացի անկախություն: Հոմանիշները նրբամիտ են լինում: «Ընդ աստեղոք ինչ կա սիրուն, քան զանցակալի եղբայր անուն»,- մի՞թե օրը ցերեկով սիրուն եղբայրությունն անհնարին է և այն զգում ենք միայն գիշերանման մենակության մեջ: Ժողովուրդն ուզում է օրինականություն: Ըստ տարիքային շերտավորումների ուզում են զվարճանք, ուսում, կենսաթոշակ: Հոմանիշները ճեղքվածքներ են տալիս:

ՍՍՌՄ-ում ժողովուրդների հայր Ստալինը 16 օրինական կին ուներ, չհաշված ավտոռնոմ ռեսպուբլիկա սիրուհիները: Այդ մինիմայր հայրենիքները նրա մահից հետո հավատարիմ չմնացին նրա փայծաղ հիշատակին: Ավելի ուշ՝ նրա դիակը դամբարանից հասցրին գերեզմանի դռանը: Այնուամենայնիվ, այդ հայրենիքները երկար տարիներ չարչարվեցին, մինչև որ արժանացան միայնակ մայր հերոսուհու անկախ կարգավիճակին: Այդ տեսակետից սիրուհիների մեծ մասի բախտը չբերեց: Մենք բաց թողինք դեմոկրատական երկրների փաստը, որպեսզի չաղավաղենք հայր Ստալին բարոյական կմախքը:

Կինը և տղամարդը, սեփական պահանջներից ելնելով, միմյանց հասկանում են միակողմանիորեն, հետո՝ մասնակի, ապա՝ ի մի բերելով ամբարած տեղեկությունները, ի վերջո, այնքան մանրամասնորեն ու հակասական, անկանխատեսելի, որ գալիս են այն եզրակացության, որ ոչինչ չեն հասկացել: Սովորաբար քիչը հասկանալուց թվում է, թե լրիվն են հասկացել: Լավագույնը կնոջն այնքան լավ է հասկանում, որ ի վերջո երբեմն ինքն էլ է կանացիանում: Տեղի է ունենում և հակառակ գործընթացը: Ստալինը այդ Լենինն էր երեկ,- այսօր դա հարաբերական է հնչում: Կինն ի ցույց է դնում այն, ինչ նրա մեջ կգնահատի տղամարդը: Տղամարդը նույնպես երբեմն սխալվում է, երբ ի ցույց է դնում այն, ինչ պիտի որ գնահատվեր կնոջ կողմից:

Կոլխոզի հայր նախագահը նախ իր գահի մասին էր հոգում, ու նաև իր մարմնի բազմանդամների մասին, որոնք տեղավորվում էին այդ գահի վրա: Հոգ էր տանում իր կուսակցական պատվանդանի ամրության մասին: Հետո՝ այդ պատվանդանի տակ գտնվող հայրենի հողի մասին, որն աշխօրարար բերքազրկվում էր՝ ի նպաստ կոլխոզապահության: Ո՞ր կորան ձմերուկի չափ աճած վարունգները և նրանց ուղեկցող բանջարք, որոնք դառնում էին հակաառողջապահական «սետկաների» ժամանակավոր կալանավորները: Այս օրերին խորհուրդ է տրվում հանրային աղբարկղները մատակարարել բարձրորակ մնացորդներով: Պոետները ոչ միայն անմահ են, այլև չեն էլ ծերանում, որովհետև ամպագոգոռ գրում են աղբարկղները բրբրող ծերունիների մասին: Սնակը և ուրիշները չէին գրի մարդ-աշխարհ-շալակ ու նմանատիպ հրապարակախոսական բանաստեղծություններ, եթե լրագրողները կոմունիստների օրոք կարողանային կատարել այն դերը, որ կայացրին հետագայում: Սնակները զոհվեցին, կեցցեն լրագրողները, թեպետ նրանց շարքերում նույնպես եղան հանրությանը քիչ նկատելի զոհեր:

Եթե պետական ապարատի աշխատող ես, քո անձնական թշնամին պետության թշնամին է: Երգիծաբանին համարում են պետական մտածողությունից զուրկ, անցանկալի տարր, և նա արժանանում է բարձրորակ սադրանքի, ընտիր զրպարտանքի, նյութական ու ստեղծագործական զրկանքների,- մինչ պատմաբանների հերթական սիմպոզիումները կատարում են գործող կառավարության առաջադրանքը: Ընթացքում գերեզմանոցները ծնունդյան ու մահվան թվականներ են հավաքում, ինչպես դպրոցականը՝ վերոհիշյալ բոլորի բաց թողած դրոշմանիշները:

Քո ասելու ախորժակը փակում են, սնունդու ախորժակը չեն լրացրողանում բացել: Եթե փնտրում ես ու չես գտնում, ապա՝ կամ մինչև վերջ պետք է փնտրես, կամ առհասարակ պիտի չփնտրեիր: Դա կախում ունի նրանից, թե ինչ ես դու և ինչ ես փնտրում: Տարածքին խնամք է պետք, հայրենիքին հզորություն: Երկրին սեր է հարկավոր:

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Նարեկացին պարսկերեն

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» 1000-ամյակի կապակցությամբ, Սպահանի «Ֆարդա» հրատարակչությունը՝ հայկական մանրանկարչություններով նկարազարդված, շքեղ կազմով, բարձր տպագրական մակարդակով եւ ամբողջական տեսքով վերահրատարակել է իրանահայ ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ, թատերագիր, Սպահանի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս Ազատ Մաթյանի, հիրավի բարձր վարպետությամբ, պարսկերեն լեզվով թարգմանած Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ ստեղծագործությունը:

Սույն թարգմանությունը և նրա բարձր ճաշակով վերահրատարակումը, կարծում ենք, ոչ միայն լավ նվեր է պարսկալեզու ընթերցողներին, այլև իրանահայ թարգմանական արվեստում անվերապահորեն կարելի է նոր և լուրջ նվաճում համարել, որը արժանի է համապարփակ վերլուծության ու գնահատանքի, միայն ասենք, որ շնորհիվ թարգմանիչ Ազատ Մաթյանի լուրջ և նվիրական աշխատանքի՝ չթուլացող վեհությամբ, ամբողջ մատյանի ընթացքում զրնգում է Նարեկացու աստվածային շունչն ու փառավորում ընթերցողին:

Վերջում ավելացնենք, որ Հայաստանում սփյուռքահայ գրողների առաջին համագումարում Ազատ Մաթյանը և մի խումբ սփյուռքահայ գրողներ գրականության ասպարեզում մատուցած ծառայությունների համար արժանացան ոսկե մեդալների:

գծի ձայնը

Վրեժ Քասունի



Համարի նկարազարդումները՝ Արշակ Սարգսյանի

© National Library of Armenia